

N16



ՀՐԱՄԱ

Պատօնսթերթ
Ամրեսքութես
ՀՀ ՀԱՅՈՒ
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

Ծա ՏԱՐԻ

Թ-ՁԲ



1982

~~Digitized by~~
W. 9-12.



Ի Ռ Ա Ծ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ԱՄՐԻԿԱՆՑՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՒ
ԵՐՈՒՍԱԳԼԵՍԻ

ԵԶ ՏԵՐԻ

Թ - ԺԲ

2777

1982



2013

ՍԻՆԱ

ԱՄԱՍՎԻՐ

ԿՐՈՂԱԿՄ - ԳՐԱԿՄ - ԲՈՒԱՄԻՐԱԿՄ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԻ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԵԱՆ

ԵԶ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՀՐՁԱՆ

1982

Սեպտեմբեր - Դեկտեմբեր

Թիւ 9 - 12

1982

September - December

No. 9 - 12

S I O N

VOL. 56

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press, Jerusalem

1938 Կանգ

8811 848

ՓՈԽԱԾԿԱՆ ԽՄԲԵԿԴՐԱԿԱՆԻ

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր Ճառը

• • • • •

Գերաշնորհ, Հոգեշնորհ և Բարեշնորհ
Միաբանակից իմ, Եղբարք և Սիրելիք ի Քրիստոս

Երեք ամիսներէ ի վեր ձեր մէջ եմ արդէն, ստանձնած՝ պարտականութեանց լուծը, զոր Պատ. Միաբանութիւնդ աւելի քան ութ ամիսներ կանուխ առաջարկած էր ինձ իր բարեհամ ընտրութեամբը, յետ վախճանի ամէնուդ և իմ անմոռանալի և ամէնարժան Հօր, որոյ և իր բոլոր երանաշնորհնախորդաց յիշատակն օրինեալ յաւիտեան:

Թոյլ տրուի ինձ, այս առթիւ, երբ առաջին անգամ կը նախազահեմ զիս ընտրող ժողովոյդ գումարմանը, անգամ մը ևս յայտնել զգածուած սրտիս շնորհակալութիւնը, իմ մասիս յայտնուած վստահութեան համար:

Բարութեանց Տէրը շնորհէ ամէնուդ և ինձ կեանք և հոգի բարի, կարենալու համար կատարել մեր պարտականութիւնքը և արդարացնել Ազգին ակնկալութիւնները:

Դիպուածաւ չէ որ Տուն կը սիրեմ կոչել այս դարաւոր յարկը. իմ համոզում է արդարե թէ ա՛յդ է անոր ամենէն ընորոշչի նկարազիրը. զործի կամ շահու հաղորդութեամբ հաւաքուած անդամներու ընկերակցութիւն չենք հոս, այլ նուիրումի ուխտով գոյաւորուած եղբայրութիւն մը, որ եկած է հոս ապրիլ և իրազործել հաւատքի և սիրոյ կեանքը:

Աստուծոյ փառքը և Ազգին սէրը. այս զոյգ զգացումներուն մէջ է որ կը կայանայ այս Տան. ոգին կամ նպատակից. Աստուածպաշտուութիւն և աղջամիրութիւն, ասո՛նք պիտի լինին յետ այտու եւս, ինչպէս եղած է ցարդ, այն կրկին միջոցները, որոնցմով պարտինք ամէնքս յանալ ընդ միշտ իրականացնել այդ նպատակը:

Աստուածպաշտութեան մասեր են. կրօնական կեանքը, եկեղեցական կենցալը, հոգեւորական նուիրումը: Դարերու երկար ընթացքին մէջ կանգուն մնացած է այս Տունը, որովհետեւ անխափան պաշտուած է Աստուած հոգւով և ճշմարտութեամբ այս նուիրական բարձունքին վրայ՝ զմեզ կանխող սերունդներու կեանքին, կենցալին և բարոյական նուիրումին սէջ: Պէտք է շարունակուի, պէտք է շարունակենք այդ կարգն ու կանոնը: Անոնք որ յանուն որ և է ձկուումի կամ մտածութեան կը փորձուին այլայլել դարուց ի դարս շարունակուած այս ուղղութիւնը, այս Հաստատութեան բարեկամներ չեն երբեք:

"

Այս Ժան մէջ, որ ամէն բանէ առաջ ծունն է Աստուծոյ, ամէն բանէ աւելի պէտք է թաղաւորէ Աստուծոյ խորհուրդը:

Իսկ ազգասիրութիւնը, զոր պարտինք ապրիլ այստեղ, ամբողջովին կը բովանդակուի այն շանագրութեան մէջ, զոր մենէ իւրաքանչիւրը առանձնաբար և ամէնքս միասնաբար պէտք է ունենանք Քրիստոնէութեան ոստանին մէջ բարձր պահելու համար Հայ Ազգին պատիւը և Հայաստանեայց Եկեղեցւոյ դիրքը: Կարենալ մեր ժողովրդեան համար հոգեւոր միմիթարութեան մըշտական ալրիւր մը և մտաւոր մշակոյթի և կրօնական ու բարոյական դաստիարակութեան վառարան մը ընելու համար այս Հաստատութիւնը:

Փառք երախտաւոր նախնիքներու, անոնք ըրած են իրենց կարելին, Ս. երկրին մէջ մեզի կտակելու համար նույիրական այն ժառանգութիւնը, որ հակառակ ժամանակի ընթացքին մէջ ենթարկուած բազում կրծատումներու և նուազմանց, տալուին կրնայ մեզի երախտագիտութիւն հարկադրել անոնց սուրբ յիշատակին:

Մեր պարտքն է, Եղբարք իմ և Սիրելիք, արթուն և անթարթ աչօք հսկել և անշէջ պահել կանթեղը զոր անոնք կախած են հաւատացեալներու համբուրներէն մաշած խաչքարերու առջև և մոմելինաց բոցէն ծխոտած կամարներն ի վար: Այդ լոյաը մեր ազգային պատիւն ու պարծանքն է, մեր չերմեռանդ և իմաստուն հոգածութեան մշտական առարկայ պիտի լինի ան: Հայ Երուսաղէմին պահպանութիւնը Տիեզերական Երուսաղէմին մէջ՝ պէտք է լինի մեր ազգայիրութեան հոգեւոր զինուորութեան զերագոյն պարտականութիւնը, որու առջև պէտք է տեղի տան, եթէ երբեք անուղղ հարկ մը պահանջէ, բոլոր միւսները: Մենէ ակնկալուած ազգասիրական մէկալ պարտականութիւններն են, ինչպէս զերս ակնարկուեցաւ, հոգեւոր միմիթարութեան և կրօնական դաստիարակութեան զործը, որ սկզբէն իսկ արդէն եղած է բարեբախտարար այս Ժան մէջ և Հոգելոյս Ամեն: Դուրեան Սրբազնի պատրիարքութեան օրով առաւելազոյն և զնանատելի աստիճանի մը հասած: Ամէնքս զո՞ն և ուրամ միայն պարտինք լինի անշուշտ այս շարժումով ձեռք բերուած և աւելին և յօւսադրութիւնը ներշնչող զեղեցիկ արդիւնքին համար:

Երբ կը խորհնենք այս կէտին մասին, Եղբարք իմ և Սիրելիք, չդադրինք երբեք ի մտի ունենալէ սա պարագան թէ ոչ մէկ ատեն՝ իր փոխարեբական կամ նկարագրական իմաստովը նոյնիսկ՝ այնքան սրտառուչ և նույիրական եղած է աստուածաշնչական այն պատգամը. «Ել ի վերայ լերինդ բարձու, Աւետարանիչդ Սիօնի . . . միմիթարեցէք, միմիթարեցէք զժողովուրդ իմ, ասէ Տէր . . . կոտորակուած, հոգմակոծուած, տառապանքի անհուն դաշտին մէջ չուարած, բայց իր աշըը յօյսի փայլատակումներէն հեռացնել չկրցող այս ժողովուրդը, որ մերինն է, մենէ կ'ակնկալէ իր կոշկոնուած հոգին միմիթարութեան լաւագոյն մէկ մասը, և այդ միմիթարութիւնը անիկա լրիւ ստացած պիտի լինի Սիօնէն, եթէ Կարենայ առնուլ միշտ բարի լուրեր մեր մասին, բարոյապէս խաղաղ՝ հոգերապէս բարզաւաճ՝ զբական և կրթական վաստակներով արդիւնալից կեանքի մը վերաբերմամբ: Աշխատինք տալ իրեն այդ միմիթարութիւնը՝ մեր կեանքովը նախ, և յետոյ այսօր մեր բեմովը, մեր մամուլով և քրիստո-

նէական կրթութեան և դաստիարակութեան մեր զործունէութեամբը, ու վաղը, երջանինք թուական այս Հաստատութեան համար, անոր ծոցէն մեկնելիք երիտասարդ և կրթուած ու հոգելից եկեղեցականներու առաքելութեամբը:

Այս Տունը, լինելէ վերջ Տուն Աստուծոյ, է նաև Տուն Աղջին: Եթէ չկարենանք փառաւորել զայն իրբե աստուածաշտութեան կայսն, կը մթաղնի Աստուծոյ նայուածքը մեր վրայ. իսկ եթէ չկարողանանք միշտ աւելի բարձրացընել զայն իրբե վառարան ազնիւ և մաքուր ազգասիրութեան, կը խոժողի Աղջին բարի ժպիտը հանդէպ մեզի: «Զայս պէտք է առնել և զայն շթողուլ», Միանգամայն կատարենք մեր զոյզ ազգային այդ պարտականութիւնները:

Բայց կատարելու համար այդ պարտականութիւնները, պէտք ունինք միջոցներու, որոնք կրկին են անշուշտ, բարոյական և նիւթական:

Առաջինը, կարևորագոյնը, մեր ձեռքն է ունենալ զայն կամ ոչ: Եթէ կ'ուղենք որ իրավէս արդիւնաւորուի Ս. Աթոռոյս նկատմամբ ունեցած մեր սէրը, պարտինք զիտնալ նախ սիրել զիրար. եղայրութեան զգացումը դատարկ բառ մը, ձև մը կամ տարազ մը պէտք չէ լինի, այլ զաղափար մը և իրողութիւն մը. երէցը պէտք է սիրէ կրտսերը՝ իրբե ապազայի յոյսն ու ծաղիկը. ու կրտսերը պէտք է սիրէ երէցը՝ իրբե կենդանութեան արմատը. ու երկուքն ալ, այսինքն ամէնքս ալ՝ պէտք է յարգենք օրէնքը և իշխանութիւնը, արմատն ու ծաղիկը պէտք է միշտ զօդուած մասն իրարու հետ՝ սիրոյ և օրէնքի կենդանութեամբ: Խաղաղութեան և յառաջիմութեան ապահովութիւնը կախում ունի այս երկուքէն՝ սէրէն և օրէնքէն միանգամայն:

Իմ լիրմ փափաքս է որ ամէն ինչ տնօրինուի միշտ սիրոյ և օրէնքի զիտակցութեամբ: Եթէ, այսպէս, զօրաւոր լինինք բարոյակէս, ինքնին կը զօրանանք նաև նիւթապէս. վասնդի զուարթ, խաղաղ և բարի հոգին, այսինքն սիրալիր հոգին է որ կը զրդէ միտքը «ի հնարա»: Նիւթական ըսելով կ'իմանամ նախ Ս. Աթոռոյս կազմակերպական վիճակը, և յետոյ ելմտական կացութիւնը: Կը խորհիմ թէ այս մասին կան կարեսը ընելիքներ. փոքրիկ թուլացումներ յառաջ եկած են կրթական և կարգապահական կազմերու վրայ. կը յուսամ թէ կրթարանը շուտով կը կարգադրուի, հաստատուն և վերջնական ձևի վերածելով դպրոցական ծրագիրը, որ պատրաստութեան մէջ է արդէն. իսկ զանական կարգապահութեան վերաբերեալ կէտերն ալ, ելմտական տարիէն առաջ յուսով եմ թէ կը գտնեն վերջ, երբ պատրաստուին և կիրառութեան դրուին այդ առթիւ անհրաժեշտ դատուած կանոնագրութիւններն ալ: Դժուարագոյնը՝ բուն նիւթականը կամ ելմտականն է, որ, ինչպէս զիտէք ամէնքդ, և ինչպէս զիտէ Աղջին համօրէն, կը մնչէ մեր վրայ:

Խանգարուած չէ մեր տնտեսական կացութիւնը, բայց հեռի է նախանձելի ըլլալէ, քանի որ պարտքի կարեսը բեռ մը ունինք մեր զլուխին վրայ: Աղքատ չէ Ս. Յակոբայ Տունը (օրէնութիւն ասոր անտեսականը նախահոգացող հին վարիչներուն և նույիրատու բարեպաշտներուն), բայց իր կալուածական դրամագլուխին մէկ մասին անշարժացման և մեծ մասին ներկայ համաշխարհային առաջնապին պատճառաւ նուտզման հետևանքով, չունինք հարուստ Հաստատութեան մը դիւր կեանքը:

Կը փոփաքիմ մտածել թէ մեր ելմտական դժուարութեանց այն մասն ալ, որ մօտաւոր անցեալներէն կու գայ մեղի, հետևանքն է ոչ թէ ուղղամտութեան՝ այլ հասկացողութեան պակասին։ Կրօնաւորներ ենք ամէնքս ալ, և ա'լ աւելին՝ վանականներ, այսինքն աշխարհէ մեկուսացած մարդիկ, որ բնականօրէն չեն կրնար ունենալ լիուլի հասկացողութիւնը աշխարհը վարող այն դիւային ոյժին, դրամին կամ հաշիւին, որ անա տատամուսի մատնածէ այդ տեսակէտով ամենէն հանրահռչակուած հզօր ուղեղները, աշխարհի մեծագոյն հաշուազէտները։

Լծուած եմ արդէն գործի, և, հակառակ կլիմայական փոփոխութեան աղդեցութեանը արդէն ոչ-քաշակազմ իմ առողջութեանս վրայ, աշխատութիւնը և կամքը չէ որ կը պակսին ինձի. և պիտի ընեմ իմ բովանդակ կարելին ծառայելու համար Աստուծոյ և Ազգին այս Տան։ Իմ անկեղծ և խոր փափաք է միայն որ զործակից լինինք միշտ ամէնքս իրարու։ Մէրը, խաղաղութիւնը և օրէնքին յարզանքը միայն պէտք է միշտ առաջնորդէն մեզի՝ այս դժուարին այլ քաղցր լուծին ներքե, ծառայելու համար Աստուծոյ, Ազգին և իր Եկեղեցին ու Ս. Աթոռի։

Կը մաղթեմ որ Տէրը միիթարէ մեր տառապեալ Ազգը, դօրացնէ մեր նահատակ Եկեղեցին, ի հաստատութեան և ի պայծառութեան պահէ Սուրբ Աթոռս, և օրէնէ ամէնքս(*)։

Թ. Ե. Գ.

(*) Յարմար նկատեցինք, փոխսան Խմբագրականի, «Սիոնոի այս թիւը բանալ ճառովը Ս. Աթոռոյս երախտաշատ Պատրիարքներէն Թորգոմ Արքեպս. Գուշակեանի, զոր արտասանած է իր գահակալութենէն ետք նախագահած առաջին Միաբանական Ընդհ. Ժողովին բացման առիթով։ Արտագրած ենք զայն, կարգ մը հատուածներու յապաւումով, «Սիոն»ի Ապրիլ 1932ի թիւէն։ Կը խորհինք թէ հոն արտայայտուած զգացումներն ու գաղափարները կը պահն տակաւին իրնց թելադրականութիւնը ինչպէս շահեկանութիւնը, հակառակ կէս զարու անզրափտէ մը եկած ըլլալուն։

ԽՄԲ.



ՎՐՈՅԱՎԱՐՄԱՆ

ԼՈՅՍ Կ ԼԵԽՍՈՅՑ

(Տօն Ա. Թարգմանչաց Վարդապետացն մերց)

«Թու է լոյս աշխարհի
(ՄԱՏ. Ե. 14):

«Նա եմ լոյս աշխարհի, որ զայ զինի
իմ՝ ընդ խաւար մի զնացէ, այլ ընկացի
զլոյն կենաց (Յովհ. Է. 12):

Հայոց հոգիի և ժաքի լուսաւորիչ-
ները՝ Ս. Գրիգոր, Սահմակ, Մեսրոպ, Ե-
ղիկ, Դաւթիթ Անյալթ, Գրիգոր Նարե-
կացի, Ներսէս Կրայեցի Թարգմանչներն
ու տշակերտներու փառանդը անոնց՝ հո-
գիով անուան և ընդունեցին կեսնի լոյսը:

Ուստի իրենք ալ լոյս եղան, լուսա-
ւորիչ դարձան:

«Լոյս ի լուսոյ:

Աշխարհի կոյսը լոյս եղաւ Հայոտանի,
Հայոց առաքեալներն ու Թարգմանչները
լուսափայչ՝ իրա՛ւ արքանեակներն
են Արքար Արեգակին, բանքերները կե-
նաց Բանին:

Տէրը ուզեց որ իր հետևորդներն ալ
լոյս լինեն աշխարհի:

«Թու է լոյս աշխարհի:

Ինչպէս որ տշանակին վրայ վառող
ճրագը կը լուսաւորէ տունը, նոյնպէս
պէտք է լինին քրիստոնեաները, Դո՛ւք:

«Աւելիօվի տեսնեն ձեր բարի զուծերը եւ
փառաւուեն ձեր հայրը որ երկինն ես
(Մատ. Ե. 16):

Թարգմանչներու կեռնքն ու գործը
փառաւորումը եղան Երկնաւոր Հօր:

Անոնց լոյսն ու փառքը կը շոշան հայ
մշակոյթի անցեալ, ներկայ և ապագայ
հարիզոններուն վրայ:

Անոնք լոյս եղան մեր աշխարհին սա-
իմաստով, որ Աւետարանէն իրենց ըն-
դունած առաջ կեանքը չթագուցին, հո-
գեստը լոյսը ծաւալեցին Հայոտանի վրայ,
սրբեսդի իսկական կեանք ու կենդանու-

թիւն համատարած լինին հայ ժողովուր-
դին վրայ:

Ահա փառաւորումն Աստուծոյ, Փառքն
ու մեծութիւնը լուսաւորիչներու, որոնք
շողերն են Լոյսին, որ ածագեաց ի խաւարին:

«Եւ լոյս նեմարիս, որ լուսաւոր առեկ
զամենացի մարդ, որ զալոց է յաօխարեն
(Յովհ. Ա. 9):

Աստուծուծ է բուն լոյսը և աղբեւրը
լոյսին: Ան է՝

«Ենեղեջիչ լուսոյ եւ յօրինիչ զիեւերոյ,
կեանք ի մահու եւ լոյս ի խաւարի, լոյս
ակն ունողաց եւ երկայնմուրիւն աւրակու-
սելոց (Նարեկ, Բան Դ. Պ.):

Ասոր համար է որ Եկեղեցիով կը ձայ-
նակցինք Ծնորհալիին:

«Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս,
բանկեալի ի լոյս ամասոյց, Հայր երկնա-
ւոր (Ժամագիրք):

Լոյսէն րդիս լոյս է Ան, որուն հա-
մար կը խստավանինք.

«Լուսովի լոյս, Քրիստոս, ամենենան լու-
սաւորեցան (Ժամագիրք):

Նման օրհնեալք մը, նման մազթանք մը
մեր օմեծասթանքանով երեք պիտի չկա-
րևանյինք մրմթչնել եթէ Սուրբ Գրիգոր, Սահմակ
և Մեսրոպ շողակթամումը չլինէին
անհառելի Լոյսին և չդառնային լուսա-
ւորները հայ հոգիներուն:

Ուստի, ամէն անգամ որ հայերէն գի-
րին և գիրքին ներշնչած խանդավառւ-
թեամբը կը պահնծացնենք Սրբոց Թարգ-
մանչաց յիշտատակն ու գործը, նախ պոր-
տինք անսնց օրինակին հետեւելի փա-
ռաւորել զԱստուծուծ, որ Քրիստոսով լու-
սաւուն է աշխարհի և մեր լուսաւորիչ-
ներուն, որոնց սիրան ու հոգին այն քան-
պայծառացան գեղեցկութեամբը յաւիտե-
նական Լոյսին:

Ան է որ չնորհաց թուտկանի արշա-
լոյսին իսկ ծագեցաւ, չորրորդ և հին-
գերորդ գործերուն մանւանք բարձրա-
ցաւ մեր երկնակամուրին վրայ, ու անկէ
ի վեր հայ գիրին և մշակոյթին ճառա-
գայթամեմերուլը կեանք և կենսունակու-
թիւն կու տայ Հայաստանի և հայ ժողո-
վուրդին:

Հետևարար, ինչ որ իբր երտխոտագիր տակուն տուրք տարուէ տարի կը մատուցանենք Հայաստանի լուսուորիչներուն և անոնց գործը յաւերժացնող ընտրանին, ի գնահատութիւն հայերէն այրութիւնին և հայկական մշակոյթին, հարկ է որ առիթ լինի լուսաւոր անդրադարձումի և մեր երախտագիտութեան։

Անտարակոյս որ Սրբոց Թարգմանչաց գործը ծնունդն է Ս. Գրիգորով սկսուած հարիւրամեայ Երկաննքին։

Գոլոտնիք չեն մեր լուսաւորիչներու հոգեկոն կապերը, անոնց մտահոգութիւններն ու գործերը։

Հայաստանի գործը ու հայոց կողմէ քրիստոնէութեան պետականացումը 280-290 ին, էն ուշը 301 ին, տեղի ունեցան շնորհի Ս. Գրիգոր Լուսաւորչի։

Հայերէն գիրերուն գիւտը կատարուեցաւ 404 ին, ստեղծագործ հանճարովը Ս. Մեսրոպ Մաշտացի։

Ասուածածառնչի սոկեղէն թարգմանութիւնը լրացաւ 435 ին, Հայ մշակոյթի սոկեգարք ծաղկեցաւ հոգանաւորութեամբ Ս. Ստեփան Պարթևի։

Ուսափի, Լուսաւորիչ, Սահակ և Մեսրոպ, ի զլուխ երէց և կրտսեր թարգմանիչներու, լուսեղէն խարիսխներն են հայ մշակոյթի տաճարին, հաստատուած Հայաստանի սիրտին և հայ հոգիներուն խոր։

Անոնց կը պարտինք մեր տղգային կրօնակոն ուրայն կհանքը։

Բնակոն է որ հնատքքը քուինք գիտնալու համար թէ ինչպէս իրադրուեցան մեր պատմութեան այս երեք մեծաւ գոյն եղելութիւնները։

Այս մասին ծոնօթ են Ագտթանդեղոսի, Կորիւնի և Փարպեցու հրաշապատում գրուածները։

Մենք ալ մեր առաջին պատմիչներուն պէս յարգանքով կը խոնարհինք ահելական յափշտակումներու, ճգնողական երկունքի և ասաւածային յայտնութիւններու առջեն, որոնք այնքան առաւուրթեամբ բաժին եղան մեր լուսաւորիչներուն։

Բայց, ասոնց կարգին, ձեռք բերածած հրաշաւլի արդիւնքին մէջ կաք գործնաս

կան պարտգայ մը, որուն կ'ակնարկն միեւնոյն պատմիչները։

Սերբ գործակցութիւնն ու փոխագործ սէրն է ան՝ հասարակաց օգուտին համար։

Անոնց գործին ծաղկումն ու յաւերժացումն ալ, ինչպէս փորձառութիւնը կը ցուցնէ, կարելի կը լինի միայն փոխագործ գործակցութեամբ և բոլորանուելը սիրով՝ յօգուտ հայ գիրին և գրականութեամն և պահպանութեամն։

Իրաւամբ կ'ըսուի յաճախ. «Մէկ ծաղկով գարուն չի գար»; «Մէկ ձեռքով ծափ չի գարնուիր»; «Մէկ մատով գործ չի դառնար»; «Միութիւնը զօրութիւնն է»։

Փողովրդական ասացուոծները հիմնըւած են փորձառութեան վրայ։

Սայդ է որ պատմութիւնը ոսկի տառերով կ'արձանագրէ անունները մեծ դէմքերու, որոնց գործը բախտարոշ է իրենց ազգին կամ մարդկութեան համար, բայց նկատելի է որ եթէ անոնցմէ ոմանք տառնձինն թողուէին, առանց մտերիմ գործակցութեան կամ բարեկամական հոգանաւորութեան, աշխարհս զուրկ պատի մեր այն բարիքէն զոր կը յայելէ, իսկ անոնք պատի չհասնէին մեծութեան և փոռքի այն կատարները, ուրկէ հիցաւը և սէր կը ներշնչէն սերունդներու։

Մեր մէջ նկարագրի մեծութիւնն է Ս. Գրիգոր Պարթև, որ քաւելու համար իր հօր՝ Անակի մեղքը, կը զինուորի Տրդատի, կը խոստովանի իր լոյս հաւաքքը, և չի զոներ Անահիտի, հակառակ իրեն եղած խոստումներուն և պատուալիքին։

Մեծութիւն մըն է Սահակ Պարթև, որ հակառակ նախարարներու ծնչումին, կը նախընտրէ վատանգել իր տնձն ու դիրքը, քան թէ գործակցիլ Վառմշապուհի անարժան սրդին Արտաչուը գանձնէց ընել և անոր աղջ պարսիկ մը նախցնել ուզող անինարհութը նախարարներուն, որպէսզի իր տարարութ հատն ու հիւանդ ոչխարը զերծ մնան օտար գայլերու կամ ապացութեանէր։

Հակայ մըն էր Հացեկացի Մաշտաց, որ պետական քարտուղարի նախանձնելի գիրքը թողլով կը նուիրուի մենաւորա-

կան խոկւմներու, խստակեց վանական-ներ պարագանելու և թարգմանչական-շխատանքի:

Բայց, եթէ միայն այսքան լինէին Ս. Գրիգորի, Սահակի և Սեսորսպի մեծութիւնները, անոնք հաղիւ թէ ցոլացող ասազի մը կեանքն ու փայլը կ'ունենացին: Մինչեւ իրոզութիւն է որ մեր իժագական երկնակամարին վրայ թաւալող տարիներու ու դորերը յաջորդող սերունդներու աշքին աւելի ևս կը բարձրացնեն անոնց իւրաքանչիւրին հմայքը, կը պայծառացնեն անոնց փայլը, կ'ընդուրձակեն ու կը գեղեցկացնեն անոնց մեծութեան ծիրը:

Գաղտնիքը:

— Անոնք միշտ գիտակից եղան իրենց քահանայական կոչումին և լիովին կատարեցին իրենց պարտքը Աստուծոյ և ժողովուրդին հանդէպ:

Անոնք երեք իրենց զիրենք տէր և իշխան չամարեցին, անձնական հանդիսու և անցաւար փոռք չհետապնդեցին, իրենց անձերն ու գիրքը ի սպաս գրին Տիրող կամքին, հայրենիքի և աղջի օգուտին:

Անոնք բարին միայն գործակից եղան, բարին գործեցին, և ամէն բարի գործակցութիւն գնահատանքով ընդունեցան:

Անոնք այնքան խսուարի եղան, որ իրենց կատարած բալոր մեծ գործերը Աստուծոյ միայն վերագրեցին, Ասկէ՛ զանցառումը իրենց անուններուն յիշատակութեան:

Ան ապացոյցը, թէ անոնք սրպէս մշակները Տիրող այլիքին ոչ միայն չնորիք չէին համարեր իրենց ըրածները, այլև համեստաբար կ'ըսէին:

«Ծառալիք անպիտանի եմ, զոր պարտական առնել արարաք» (Ղու. Ժէ. 10):

Հււառարիէ մեծ է, որովհետեւ Աստուծոյ փաքին և ժողովուրդի գրկութեան համար շարչարակից լինելով Քրիստոսի, կրցաւ Աւետարանին լոյսը ծաւալիէ՝ որքան իր խօսքին նայնքան և աւելի իր կեանքին աղդեցութեամբ:

Սահակ Պարթէ մեծ է որքան իր գիրքին և ծագումին՝ նայնքան և աւելի

Աստուծոյ խօսքը ուզիղ մեկնելու և ժաղվուրդին սիրտը անոր բանալու իմաստութեամբն ու աշխատանքովը:

Մեսրոպ Մաշտոց մեծ է, վասնզի ինչպէս որ Գրումեթիոս երկինքին կրակը իրը օրնութիւն աշխարհ բերաւ, Սուրբ Մաշտոց Հիմրին փառքը յափշտակեց, հայոց անդիր լեզուն գիրով արձանացնելու և անդիր ժողովուրդը գիրով անմահացնելու հրաշքը գործեց:

Բայց այս երեք ընտրեալները, որոնք իրենց կեանքին գեղեցկութեամբն ու հայրենասիրական ծառայութիւններովը Հայուստանի երկնակամարին տակ՝ Արարա-ի, Արագոծի և Սիփոնի համապատասխան իմացական կատարներ են, չատ բան պիտի կորսնցնէին իրենց հմայքին, եթէ զարդարուած չլինէին Ս. Հոգիին շորհնեկովը, եթէ հաւատարմութեամբ իրարու չփախանցելին և իրենց ատզանդեցին և շահարկէին Աստուծոյ և հայ ժողովուրդի լուսաւորութեան հմարու, եթէ բարիին մէջ չգործակցելին միմիանց, եթէ իրարու, Տրդատի, Վաւաշապուհի և այնքան ուրիշներու աջնկցութիւնը չընդունէին և չաշխատէին միասին:

Անոնք յաջողեցան իրական մեծութեան փառքն ու անմանութեան լուսապահը ընդունիլ, որովհետեւ գիտակցուոր իրենց անձերը ունայնացուցին, որպէսզի Աստուծով լեցուին ու Աստուծ Փառաւորուի:

Այս նպատակով անոնք գործակցեցան իրարու, Նոր աշխատանք ստեղծեցին, առաքելական իրենց գործը զարգացուցին որպէսզի Աւետարանի լոյսը ծաւալի հայոց մէջ, որպէսզի Հայաստանէն փարատի հեթանոսութեան և տգիտութեան խաւարը, որպէսզի հոյ հոգիներուն մէջ հաստատի հոյ գիրին լուսաղին խորանը, որ հայկական մշակոյթին իսկ է՛ իր երիներանց ճառագայթումներով, Անոնց մով, իրը Տիրունական Մարմինի և Արեան, մնանք կը հաղորդուինք Աստուծոյ, մեր հայրենուն և իրարու հոգիներուն:

Զարբրուդ գործն ի վեր կենցանի է կաւառը հաւատացը, զառ է կաւառը կի կանթեցը, անոր համար որ Ս. Գրիգորի թափած առուածդիրաւթեան իւզին զրայ-

առելցան պողումները Տրդատի և Վուամբ-չապուհի քրտինքնեն:

Ա. Մելքոնի, Շնմանեալ Մովսէսին, ոչ միայն Սիրէական նոր բարձունքէ մը գիրին գիւտով հայոց բերաւ Օրէնքի Տասնարանեան նոր Ուխտի Կտակարաններուն հետ, այլև լծակցելով Մահակի՝ Հայաստան բերաւ Կննդանի Ասաւումը:

Ա. Մահակ չտեսնուած մկրտութեամբ մը հայախօս դարձուց զԱսուաւծ, հայացուց Մովսէսն ու մարգարէները՝ Խորաչէի իմաստուներուն, բանասեղծներուն, նոր Ուխտի Աւետարանիներուն, Պօղոսի, առաքելուկան գունդին և հայրատեաներու գումի մը հետ:

Ինչպէս չխանդավառուի անոնցմով Որք զարդարեցին եօնինքարար զիմաստ անելին,

Հայատելով յերկի զիյր կենդանի, Հովուել բիհօն նոր Խարայէի: (Հարական Ս. Թարգմանչաց):

Ի ահս այս պահնչելի արդիւնքին, ո՞վ պիտի վարանի համաստելու ստուգութիւնը Դուրեան եղիշէ Վարդապետի խորաթափանց պատկերացումին, որով կը պարզաւին Մահակ Մելքոնի ստեղծագործեան նպատակը և յաջողութեան բանտլին. —

«Թաղթին ա'յն է որ Երեմն Երկուն ալ ա'յն ա'յն արցունենուվ իշարու նես լացին, նու'ը հու'ը Երազենով մեկսեղ հմայեցին, սու'ը սու'ը մրմունչենով մեկսեղ աղօրեցին. Եւ ինչո՞ւ այս ասէնք. — ուշկու զի Ասուած հայեկն խօսի, որպէսզի օտար լիզուներու — յօնարեն եւ ասուրեն — խոլորիւնեն բրած չորս հարիւր առթիւնեն ի վեր Աւետարանին ծառայող ծողովուրը Ասունցը առնարեն զուրս չելք այնպիսին ինչպէս իր նախնիքը կ'ինքին Արմաւիրի տօնիներուն անառան, սօսափիւն եւ սարաւափ աննելով իրենց նես հան քէ սիրոյ Երկային ազյում մք. նրակազի Լուսաւորչի զաւակները հօգեկան զմայլումով ողջունեին Յաւիսնականին մէկ նոր Յայտնութիւնն ալ հայեցի բառերով ու օճառերով, ու անոնց համար նորազոյն Աւատի մը շափ արգել ու նենար այն: Ա'լ այնուհետեւ բերեւ օտարոնի

բան մը չունենար Ասուած (Եղիշէ Վրդ. Դուրեան, Ս. ՍԱՀԱԿ եի Ս. ՄԵՍՐՈՊ. Տես Գարեգին նպիսկ. Տրապիզոնի, Աշխարհի Լոյնի Հայո, Բ. Հատոր, Պուէնոս Այրէս, 1939, էջ 123):

* *

Ատենէ մը ի գեր սփիւռքահայութեան գոյութեան սպառնացող ձուլումը նուազ վտանգաւոր չէ մեզ համար, քան առաջին գորերու հեթանոսական խաւարը և Արշակունինաց գահին տնկումը, քան Հոռոմներու և Պարսիկներու կլանողական ձգումները ձուլումը

Հիմտ, երբ մանաւանդ հայրենի հոգին կուսունն ալ չունինք տրտառահմանի մէջ՝ պահելու մեր ցեղային ինքնութիւնը և արքեցնելու մեր լինելութեան նպատակը, պէտք ենք աւելի սերտ սիրով գուրգուրում մեր հոգեւոր ժառանգութեան այն բայուր ազգակներուն վրայ, որոնք իրք անսպառ գոնձ աւանդ կը մնան մեր Հայաստանեայց եկեղեցիով, Հայ Գիրով և Հայկական Մշակոյթի հանգերագը հին կամ նոր:

Թարգմանիչները անցեալին սնուուցին մեզ կենաց հացովն ու բաժակովը, փրկեցին մեզ վերահաս մահերէ՝ շինելով մեր ազգային կրօնական նկարագիրն ու քաղաքակրթութիւնը:

Անոնց ամերակում ու ստեղծագործութիւնը ճշմարտ մեծութիւնն ու պատիւը պէտք է լինին մեր և գոլիք սկրունդներուն, քանի որ անսնցմով կ'արժենուուի մեր ներկան և կ'երախաւորուի մեր ապագան:

Բայց այս նպատակին հասնելու համար, մենք ալ պարտինք մեր լուսաւորիչներու և իմաստուն նախնիքներու հետասութեամբ գործակցիլ իրարու, որպէսզի հայերէնախօս կնքուած Աստեւածը փոտուրուի մէշտ հայկական ծէսով, Աւետարանի բայսը շղայ անսուուեր, մեր տոնմէկ կեանքը ծաղկի բարոյականով և դիտութեամբ, մեր Մշակումէց հնչէ

ԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԹՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ

304. ՆԻՒԹԸ. — Արդպէսզի ա՞լ աւելի յատակուի Խորհուրդներուն խկութիւնը, արժան է որ անոր տարրերն ալ ներկայացնենք, լրացնելու համար Եկեղեցւոյ վարդապետութեան ցուցմունքները անոնց մասին։ Այդ խորհուրդին տարրերն են, ա. Նիւթը, որովհետեւ Էտական է զգութի նշան մը, և զգաւին պէտք է լինի նիւթական, և այն ոչ նորահրաշ նիւթ մը, ի նորոյ ստեղծագործուած, այլ որ տառնըած ըլլայ մորդոց բնական եղած իրերուն մէջէն, և մարդուն մէրձաւորագոյն բոն մը իրաց սովորական կարգէն, բ. Զեր, որովհետեւ Նիւթը անորոց է իր բնութեան մէջ և կրնայ ուղղուած ԸԼԼայ տարրեր տարրեր գործերու և նպատակներու, և պէտք է որ՝ այդ մուսնաւոր պարագային մէջ՝ հասկցուի թէ ինչի՞ ուղղուած է կամ ի՞նչ բանի համար կը

յաւէտ, և մշտագառ մեան հայ մշակոյթի ջան ու հայրենի աւանդութեանց առկայժ լապտերը հայտաճարերին, գպրացին և տան։

Ասոր համար ալ մեր լուսաւորիչներու, Ս. Գրիգորի, Սահակի, Մեսրոպի և անոնց բոլոր գործակիցներուն օրինակն ու կտակը, նպատակն ու յաջողութիւնը խրախոյս պէտք է լինի ամէնուու։

Աչքի առջև ունենալով այս ամէնքը, ինչպէս կրնանք չհետեւիլ Տիրոջ սա պատռէրին։

«Մինչդեռ զիյսն ընդ ձեզ ունիիք, հաւատացէք ի լոյս, զի որդիիք լուսոյ եղիօիիք» (Յովհ. Ժթ. 36)։

«Հոյս ի լուսոյ։

Կենդանի հաւատքը գործով կը պետքարերի։

Գրօնին, Նիւթ Եսու

կատարուի։ Այդ որոշուիլը կախուած է անոր մասին եղած մատգրութեանէն, ու մտագրութիւնը ներքին բան մը լինելով՝ զգաւի ըլլալու համար պէտք է յայտնի բանի թերաւանոյ։ Ան այդ խօսքերն են որ կ'արտասանուին նիւթին դրուած տառինը, և կը ցուցնեն անոր մասնաւորեալ կիրառութիւնը, և այդ պատճառու կը կոչուին ձեւ զ. Պաշտօնեայն, որովհետեւ Քրիստոսէ հաստատուած գրական նշան մըն է, այս պատճառու պէտք է միանգամայն որ ցուցուի նաև այն անձը՝ ուրուն արտօնութիւն է տրուած կատարելու սահմանեալ նշանը դ. Ենթական բոլոր գրական գործերը այլևս ապատչին, և ոչ իսկ բնական կարգով կամ օրէնքով ի դէպ է որոշել թէ ո՞վ է որ պիտի առաջ և ո՞վ է որ պիտի բնդուունի Ուստի, ինչպէս Խորհուրդին պաշտօնեան, նոյնպէս և Ենթական պէտք է սահմանուի հաստատողին կամքերն համեմատ։

305. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ. — Գլխաւոր տարրերին, այսինքն Նիւթէն, ձեէն, պաշտօնեայէն և առարկայէն յետոյ կու գան երկրորդական տարրերը, որոնք կ'որոշնե խորհրդական գործին արտաքին

Եւ որքա՞ն շատ են ու սուրբ այն գործերը, որոնց կատարումը զմեզ լոյս և լուսոյ որդիներ կը գործնէ։

Հայ Քրիստոնեաներ, պիտի մոռնա՞ք կեանքն ու գործը լուսաւորիչներուն։ Պիտի չյիշէ՞ք և չարգարացնէք ձեր քրիստոնէական կոչումը։

«ԵՌՈՒ Է ԼՈՅ ԱԾԽԱՐԵՒՅ»

Պիտի չվառի՞ք գիտութեամբն ու հաւատքովը լուսաւորիչներուն։ Վառ պիտի չվառէ՞ք ապդին լոյսը, որ հայ մշակոյթն է, կրօնքն ու լեզուն, գիրն ու արտեստները, ամէնքն ալ ճառագայթուները Աշխարհի կայսին, որ Լոյսն է Հայաստանի, Լոյսը Հայ Ազգի։

«Հոյս ի լուսոյ։

ԶԳՈՆ ԵԳԱ. ՏԵՐ - ՑԱԿՈՐԵԱՆ

և ժամանակուր հանգամանքները, ուսկից պէտք է յառաջ գայ շնորհաց արդիւնքը, Ասոնք են, տեղը՝ ուր պէտք է կատարել, ժամանակը՝ ուր արժան է ընել, դուծիւները և հանդերձանքը՝ զորս ի դուզ է ի կիր առնել, զարդերը և ճնշութիւնները՝ զորս յարմար է աւելցնել, ազօթքն ու երգը՝ որոնցմով պէտք է գոյարել գործը, աջակիցները և գործակիցները՝ օրոնք պիտի ընկիրանոն պաշտօնեային, և առոնց նման բողմադիմի ուրիշ հանգամանքներ և մանրամասնութիւններ, զորս ընդհանուր կերպով կ'իմանանք ծէսք և արարողութիւնք անւուն տակ, որոնք թէև փոփոխական և պատահական են իրը ժամանակուր և իրը թանձրացնել, բայց հաստատուն և հարկաւոր են յընդհանուրն և վերցարաբար, զի անհնար է զգալի գործը բոլորովին մերկացնել այդ բոլոր մանրամասնեալ պայմաներէն:

306. ՀԵՌԱԼԻՈՒ ԵՒ ՄԵՐՁԱԽՈՒ. — ՄԵՐ յիշած այդ տարրերը առձեռն ունենալիչս վերջ ու, տակաւին չեն լրանար նորագուրդներուն մասին եղած բոլոր խնդիրները. Որովհետ նաև նոնցմով իրաքանչիւրին հեռաւորներուն ետևէն կու գան մերձաւորները: Հեռաւորներն են նիւթը, ձեզ ևայլն, երբ իբրենց ըստ ինքեան գոյութեան և տեսական ստուգութեան մէջ կը նկատուին, իսկ մերձաւոր են երբ իրապէս ի գործ կը դրաւին և ի կիր կ'առներին, Այսպէս հեռաւոր նիւթ կը հունչն ք ջուրը ըստ ինքեան՝ Մկրտութեան նորագուրդին համար, և մերձաւոր նիւթ՝ այն ջուրը զոր իրօք աւազանին մէջ կը գնենք՝ Մկրտութիւնը կատարած առենիս: Հեռաւորներն և մերձաւորին այս տարրերութիւնը յառաջ կը բերէ նորհուրդներու մատակարարութեան տարրերեալ զիւսկաներ, զորող կարող են ուղարկած առաջանքները, որին առաջանական պահանջման մէջ կը հանդիպ ու առաջանական պահանջման մէջ կը գնենք՝ Մկրտութիւնը կատարած առենիս:

կոչուի վաւերական, իսկ եթէ թերի են նպատակին կատարումին համար պահանջման գումարը կամարուի: Բայց վաւերականութիւնը իրեն հետ անպատճառ չի բերիր օրինաւորութիւն, ոչ միայն էական պայմաններու այլ նաև բոլոր օրինագրեալ կարգերու, որոնք երբ թերի ըլլան, թերի կ'ըլլայ օրինաւորութիւնն ալ: Եթէ օրինաւորութիւնը ըլլայ իսկ հանար է որ միւնայն ատեն չըլլայ նաև յարմարութիւնը բարոյական հանգամանքներու և պաշտօնէին կամ ենթակային ներքին պատրաստութեանց, ու այս տեսակէտալ եղած թերութիւնը թերի կը թողար նաև օրինաւորութիւնը. ըստ այսմամէն գործի մէջ էական պայմանները յառաջ կը բերեն վաւերականութիւն, բավանդակ պայմանները՝ օրինաւորութիւն, իսկ գործողներու պայմանները՝ արժանաւորութիւն:

307. ԶԱՐԱՎՈՒ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ. — Բազմադիմի կերպերը, որոնցմով սովոր ենք նայելու եկեղեցւոյ վերաբերեալ խնդիրներուն, կարծիս բական կարգով մը առաջներ ընծայեցին բաժանուել մը ընեւլու խորուրդներուն վերաբերեալ իշենդիրներուն մէջ ալ, ու տառաւածարանութեան զոնազան ճիշդերը, աննոնցմէ իւրաքանչիւրը իրեն սեփական մասը առաջ Տեսական Աստվածաբանութիւնը բաւական կը համարի բացատրի միայն էուաթիւնը և իսկութիւնը նորհուրդներուն, իրեւ գաւանաւութիւն, մինչ բարոյական աստվածաբանութիւնը կը խօսի լոկ այն հանգամանքներուն վրայ, որոնցմով պէտք է պաշտօն և մատակարարել նորհուրդները ոչ միայն վաւերաբար այլն օրինաւորութեանը եկեղեցառ կան իրաւագիտութիւնը կը զբաղի միայն ցուցները պաշտօնէից և ենթականներուն իրաւունքները նորհուրդներուն վրայ կամ անոնց մասին, իսկ եկեղեցական ծիռագիտութիւնը կ'աւանդէ ձեռերը և արագին արարողութիւնները զորս հարկէ պահպանել ըստ սովորութեան կամ կարգաւորութեան եկեղեցւոյ: Թէև ըստ այսմեր գործը պէտի ըլլար միայն գաւանաւոր

կանը աւանդել՝ իրեւ ժաման Տեսական Աստուածաբանութեան, բայց թէ՛ հասկացո՞ղութիւնը գիւրացնելու և թէ՛ նիւթը ամփոփած ըլլալու համար՝ իւրաքանչիւր Խորհուրդի առթիւ պիտի աւելցնենք քարոյական, կանոնական և ծխական կետերն ազ, աւելի կամ նուազ ընդարձակուէն, ըստ կարեւորութեան խնդրոց:

308. ՄԱՍՆԱՌՈՐ ՀԱՂԴԱՄԱՆՔՆԵՐ. —
Ամենէն բռնաւոր կերպն է անշուշտ պահել մասսանց կորդը, և մէն մի Խորհուրդի ճշմարտութիւնը կոմ գոյութիւնը ըուցնելէ զերջ, մի առ մի բացարձիկ տնոր նիւթը, ձեւը, պաշտօնեան, ենթական և ծէսը, և լուծեն այս խողիքները, որոնք ժամանակ ժամանակ յազգուած են իւրաքանչիւր Խորհուրդի չուրջ և անոր տարրերն մասին. Բայց մէն մի Խորհուրդի անցնելէ տառջ, թորք կը դատեմ յընդհանուրն ցուցնել նախ Խորհուրդի բրուն գոյութիւնը և թիւը, և զերք յիշուած տարրերուն էական հոնքամանքները իրենց ընդհանուր առումին մէջ,

309. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԽԵՐՀՐԴՈՑ. —
Խորհուրդներուն գոյութիւնը ընդհանուրա-
պէս՝ երբեք նիւթ չէ հզած հակառակու-
թեանց, որովհետեւ բաւական էր մի միակ
Խորհուրդի մը ճշմարտութիւնը՝ որպէսզի
Խորհուրդներուն գոյութիւնը ճշմարտ
ինչեր ըստ ինքեան: Խոկ քրիստոնէու-
թեան մէջ չգանուեցաւ մէկը, որ գոյնէ
միայն մէկ Խորհուրդը չընդունէր, որով
Խորհուրդներուն գոյութիւնը իր ընդ-
հանուրութեանը մէջ կը նկատուի իրեն ա-
մէնքէն խօսուղանուած ճշմարտութիւն
մը և հնեւանուր իրեն ըստ ինքեան առ
պարուցուած ճշմարտութիւն, իթէ եղան
հակառակութիւններ, առոնք յածեցան
միշտ Խորհուրդներուն աղօրութեան վրայ,
առինքն թէ թնչէ անրոց արդիւնքը:
և թէ չնորհնենք իրապէս իրենց պատ-
ճառուները բակին, թէ զգացմանց գրգիռ-
ներ են զոկ, թէ արդարութեանց արւ-
չութիւն վը առոց կաւառն: թէ քրիստո-
նական պատկերութեան մէջ մուտք մի-
ան: թէ նաև անակենալ հարի է որ խօսին գ-
ուած մասին, և ճշմարտութիւնը երեան
եւենիւ:

310. ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԹԻԱԲ. — Դեռ
այդ հարցերուն չմասօծ, ի գեկ է առն-
մանել Խորհուրդներուն թիւը, ինչպէս
որ ներկայիս կը գտնուի ան զանազան
երկիրներու մէջ։ Եթէ Ս. Գրքին մէջ
Թորթափինք, ո՞չ մէկ տեղ պիսի հան-
դիպինք Խորհուրդներու որքանութեան
մասին թուոյին ցուցմունքի, նոյնիսկ
պիտի չհանդիպինք անոնց անուններուն՝
մէկ շարքի վրայ իրարու յարաքիրարաք
յիշտաւած։ Միհենոյնը պարտաւոր-
ուած ենք բոլոր Նեկաղցիներու Սուրբ
Հայրերուն մասին, թէ՛ արեւելեայց և
թէ՛ արեւմտեայց, Վասնզի անհնցմէ ոչ
մէկը երրեք յիշտաւած չէ Խորհուրդ-
ներուն թիւը, և ոչ ալ անունները միան-
հազար ներկայացնացած, վճռարոր ըսե-
լով թէ այշչափ կամ ասոնք են միայն
Եւ այս ոչ միայն առաջին գարերուն մէջ՝
այլև յետագայ գարերուն, տասներկուա-
գարերու երկարաւեւ շրջանի մը մէջ։
Խորհուրդներուն գայութիւնը կը յիշա-
տակուի բռն առաջին գարերէն, և այն
ոչ կոյ անհատ նշարտութեանց կամ առ-
տուածային գողացնեաց իմաստով, այլ և
շնորհաց գործունեայ նշանաց մասնաւոր
նշանակութեամբ, ինչպէս ի կիր կ'առ-
նունք հսս զանոնք։

311. ԶԱՂԱՋԱՆ ԿԱՐՄԻՐԻՔՆԵՐ. — Հնաւանդ գրութեանց խուզպարկու ուստամբաստիքողները երբեմն հօթնէն նուազ և երեմն եօթնէն աւելի կը գտնեն թուռած Խորհուրդները. Տերուուղիանոս († 245) Խորհուրդ կը համարի միայն Մկրտութիւնը և Հազորդութիւնը. Օգոստիինաս († 430) տեղ մը յոյժ սակասաթիւ կ'ըսէ ակնոնց հնմար և այլուր միայն երկու Խորհուրդ գիտէ, թէն այլ և այլ անգամներ ալ Խորհուրդ կ'անուանէ նաև ձեռնադրուութիւնը, ամունանութիւնը, հօգիւորականներու օնումը, և երգմենացւութիւնը. Խոկերեան († 407) կը յիշէ Մկրտութիւնը, Երօսմին և Հազորդութեան հետ, Եփոնիսկոսի գրոց մէջ կը դիտակուին. իբր Խորհուրդ՝ Մկրտութիւնը, Հազորդութիւնը, Միաւոնը, մենակարութիւնը կրօնաւորաթիւնը և Թագումը Դամասկոսին († 754) բառ վայրիմի և տապահածամաժ.

կարծեաց, միայն երկու գիտէ, իրեն կը հնատեւին եկեղեցական նախնի մատենաւ գիրներէն շատերը Դամբիսնոս († 1072) կը թուէ երկուաստան Խորհուրդներ, առոնցմէ չըրսը Եպիսկոպոսականք և հինգը Բահոնայականք կողսիրեառոս († 1148) կը թուէ ինը Խորհուրդներ, բայց իրեւ Խորհուրդ կը յիշէ նաև հովուական առանձին գաւազանը, ջաւը և աղը, ձեթը և Միւլունը և եկեղեցական ուրիշ ձեսեր եկեղեցական Խորհուրդներուն կարգին կը յիշուի այլուր նաև Թագուարներուն օծումը Խակ Ամբրոսիոս, Բնանարդոս և Հեղեկերդոս իրբ Ծմարիս Խորհուրդ ճանչան թանլուան: Աւելի լատինները յիշեցինք, վասնի առաջին անգամ անոնցմէ ելաւ Խօթը Խորհուրդներուն թիւը, ու նկատողութեան արժանի է նաև այն որ անոնց մօտ մինչև միւ. դարձա վերջիրը գեռ անորոշ կը մնար Խորհուրդներուն թիւը:

312. ԳԱՐՁԵԱԼ ԶԱՆԱԶԱՆ ԿՈՐՏԻՔՆԵՐ, ԵՕԹՄ ԹԻՒԸ. — Անոնք նոյնիսկ որոնք ջերմացներմ եռանցով կը պաշտպանեն Կօթնեալ թիւը, կը պարտաւորուն խոստավանիր թէ անոնք առաջին յիշատակութիւնը կը գտնուի Պոմերանիոյ եկիսկոպոս Սդունի († 1139) մօտ, և Ա. Վ. Վիկոնտի Արքա Հոգոն († 1141), թէև շատեր ևս երկրայական կը գտնեն անոնց մասին աշըրքաւած վկայութեանց սուսպութիւնը, Բայց անտարտիկուսի է թէ Խօթը Խորհուրդներու թիւը աւանցեց և առօյց հոսուատապէս Պիեռոս Լոմբարդոս († 1160), մատկանուանեալն վարդապետ վճռոց, արեւմօւտքի մէջ Դպրոցական Աստուածաբանութեան նահապէտը, արուն հետքերուն վրայէն գացին իր բոլոր աշակերտները և հետեղոները, և անիրկայօրէն քարոզ թիւն ու անունները Խօթն Խորհուրդներուն, որոնք, բայց Լոմբարդոսի էին Մկրտութիւն, Հաստատութիւն, Հազորդութիւն, Ապաշխատութիւն, Յետին օծութիւն, Զեռնադրութիւն և Ամստանութիւն:

մտեայց մէջ, որոնց կարգին հնագոյնն է Լանդինականը (1237) և նշանաւորաւ գոյնն է Փլորենտիոյն (1440) զոր իրենք տիեզերական կը համարին, և որուն վճիռները Խորհորդոց մասին՝ կը գտնուին յանուայց տրուած (22 նոյ. 1440) կրաս հանգին մէջ, թէպէտե անոր մէջ շատ բան տարբեր կը բացատրուի քան ինչ որ այժմ կը վարդապետները, և այդ պատճառուած չափ ճիգ կը թափին գտնիւլու համար հրաննագին խօսքերը Խակ ինչ որ անկէ վերջ կատարուեցաւ կամ վարդապետուեցաւ արեւմուտքի մէջ, յայտնի է և սոտոյդ, միայն թէ շատ շապաղեաց Խորհուրդներու գէմ պայքարը, որուն սկիզբ տուին Վիթլիփ († 1384) և Հիւտ († 1415) և զոր լրացուցին Լուտեր († 1546) և Կալվին († 1564):

313. Ա' ԵԽԵԼՔԻ ՄԷՋ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ. — Հակոտակ յիշատակեալ պատմական տեղիկութեանց որոնք կը ցուցնեն թէ Եօթը Խորհուրդներուն թիւը և անոնց քրիստոնեայ եկեղեցիներու հաստատուն վարդապետութեանց մէջ մուծուիլը բոլորու վին նորութիւն մըն է եղած, զարժոնաբի է թէ ինչպէս արեւմուտքի մէջ, և ճիշդայն գործերուն՝ երբ Հայոց և Յունաց և Լատինաց Եկեղեցիները արդէն անջամաւած էին իրարմէ՛ կազմուած և աւարծաւած այս հոմագումարմէ՛ մուռ գործեց Ա. հոստատուեցաւ արեւլեայց մէջ ևս, և այնպէս ու այնքան որ սկիզբէն մինչէւ այսօր ոչ մէկ տարածայնութիւն և մեռագործանք շյուզուեցաւ այդ խնդրին մաս աին անոնց մէջ, ու թէև Խորհուրդին նիւթերուն, ձեկերուն, պաշտօնեաներուն և ծէսերուն համար սաստիկ վէջ և անձ զիշանելի հակառակութիւներ յուզուեցան միշտ, բայց եօթը թիւին մասին որ, և է ինդիր չեղաւ, և ան հինգ գարերէ՛ ի վեր արեւելեայց և արեւմուեայց մէջ ևս մածայնորէն կը պայտուին նօրը Խորհուրդները Անապատան վկայութեանց մէջ մտնելու՝ ի հաստատութիւն այս խապաղական համարյանութեան, բնական ըլլայ յառաջ բերել յանաց համար կիւրեղ Լուկարոսի գործերը, որ երբ 1621ին կ. Պոլսոյ պատրիարքական ա-

Թոռը բազմեցաւ, ուզեց հաստատել համաձայն լուսիքականաց, որոնց մօտ ուսուում առած էր ի սկզբան, միայն երկու Խորհուրդներ, բայց իրեններէն հակառակ կոթթան հանդիպելով՝ եօթնիցս վարուեցաւ աթոռէն, ու միշտ զերտգարձաւ, բայց ի վերջոյ մեռաւ խեղդաման (1638) և գաստապարտուեցաւ իր կարծիքը, իսկ ծօթը Ասորհուրդներու վարդապետութիւնը հաստատեցաւ իր յաջորդէն, կիրքեղ կանգարիսէն (1639), Պարթենիոսէն (1642) կ. Պոլսոյ ապա երուսաղէմի (1672) մեծ ժողովին մէջ։ Ու մինչեւ այսօր բոլոր Օրթառքք Եկեղեցինքը կը պահէն եօթը թիւը Ասորհուրդներուն։

314. ՄԵՐԻՄՆԱՍՏՈՒՆԻ ԿԱՐԾԻՔԸ. — Իսկ մերիններէն թէն ոչ մէկ տեղ և ոչ ոք աւտնդած է Խորհուրդներուն անունները և թիւը, Գր. Տաթեացի միայն († 1420) Հորցմանց գրքին մէջ բացայաց խօսքերով կը թուէ Խորհուրդները այսպէս։ «Նախ՝ Մկրտութիւն, երկրորդ՝ Դրամ, երրորդ՝ Հաղորդութիւն, չորրորդ՝ Ապաշխառութիւն, հինգերորդ՝ Վերջին Օծում, վեցերորդ՝ Կարդ Թահանայութեան, եօթնիրորդ՝ Պատկն (Գլ. ՀԴ., պրակ ԽԲ.) և կը յարէ Նոյնիսկ եռաւտեսակ պատճառներ ի հաստատութիւն և ի յարմարութիւն եօթնեակ թիւին, նման պատճառարտիւութեանց զրոս ի կիր կ'առնուն արեմուաքի Դպրոցականները իրենց գիրքերուն մէջ, և որոնք առնաստրակ վարդապետութիւններ են Դոմինիկան Ուխտին, որոնցմէ սերեցան նաև մնը երկրին մէջ գործող Ունիթոս վարդապետները։ Անէն ի վեր անա հինգ դարեր անցած են և նոյն վարդապետութիւնը կը պահուի մեր եկեղեցական գրականութեան և պաշ-

տամանց մէջ, ու վերջին Օծման Ասորհուրդին խափանման սովորութիւնը մեկնարանական ճիշերու մզան է մերինները։ պարզապէս թիւը պահած ըլլալու մտածումով։ Գէտք է դիտել նաև թէ Տաթեացիին գրութեան ժամանակը կանխադոյն ըլլալով քան Փլորենդեան տղովը, հարկ է ընդունիլ թէ ոչ թէ ի յարգանս այդ ժողովին սրոշումներուն, այլ պարզապէս ինքնիրական տրամադրութեամբ է որ մերինները ընդունած են հետեւի այդ մասին կաթոլիկ սովորութեան, որդեգրելով եօթը Ասորհուրդներուն թիւը, շարքը և յորչորջանքը։

315. ԱՐԵՒՄՏԱԵՑՅ ՓԱԼԱՅ. — ԱՌԴ ԻՆԿ է հզօրագոյն փաստը զոր Հռովմէտական եկեղեցւոյ տրմեան վարդապետները յառաջ կը բերեն իրենցմէ բաժնուած նորացանդներուն դէմ։ Եթէ կ'ըսին, եօթը Խորհուրդներու թիւի և անուններու այդ վարդապետութիւնը, որ արդարէ յայդ անդան աւտնդուած է մեկին և յստակ խօսքերով, ինքնին Թրիստոսի եկեղեցիին հնաւանդ և ընդհանուր Դաւանութիւնը եղած չըլլար, այնքան համաձայնութեամբ պիտի չընդունուէր արեկելեան եկեղեցիններէն ալ՝ այլ պիտի մերժուէր իրեւ Լատինականէն նոր ի նորոյ հնարաւած դրութիւնը։ Ու արդարէ, կարելի չէ աւրիշ կերպով մեկնել այդ տարածամ և անակնկալ և կարծես անհաւատալի հաւմաձայնութիւնը, եթէ ոչ ենթադրելով թէ կարի հոստատուն էր արդէն իւրաքանչիւր եկեղեցիի մէջ տառնձնաբար, և բուգնդակ եկեղեցիին մէջ ընդհանրուպէս նոյն Ասորհուրդներուն կիրառութիւնը և անոնց վերաբերմամբ կազմուած ներքին համոզումը։

(Տարունակելի՝ 31)

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՈ. ՕՐՄԱՆԵԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻԶՈՑԱԻ

Հայ գրականութիւնը կամ մտահնաւգրութիւնը Հայ ժողովուրդի մտաւոր զորքացման, հոգեկան թռիչքներու, կեանքի արտայայտութեան և գնացիքին արձանագրութիւնն է:

Այս գրականութեան կնիքը՝ որ սերտ յարաբերութիւն ունի մեր ազգի կենուունակութեան հետ, կրօնական և գարերու ընթացքին եղած է մեր գոյութեան և պահպանման առանցքը:

Արդարեւ Հայ Եկեղեցին մնեց դեր ունեցու Հայ Գիրի զարգացման և տարածման նույիրական առաքելութեան մէջ, ուրովինեւ լեզուն կը պատճէ ազգի մը անցեալի փառքը: Հայ Եկեղեցն իր կրօնական, բանաստեղծական, պատմական ու իմաստափական ճախութեամբ կը յայտնաբերէ Հայ ժողովուրդի լուսաւոր անցեալը: Դպրութիւնը ժողովուրդի մը մտաւոր ու հոգեոր մշակոյթին հայելին է: Աւետարանական բացարութեամբ՝ ճառա ի պազոյի բարձէ ճանաչի: Ազգային գրաշմբ չափանաց զօրաքը է մեր մայրենի լեզուն և գրականութեան մէջ՝ ու անոնց հեղինակները, ընդհանուրապէս եկեղեցականները, հաւատաքի ու տեսիլքի փայլուն գէմքեր ևն եղած:

Մեր գրականութեան սկզբնաւորութիւնը կը պարտինի Փ. Սահակի, Ա. Մեսրոպի ու անոնց աշակերտներուն: Թերեւս սմանք առարկեն այս յայտարարութեան՝ ցոյց տալով հայ ժողովուրդական անգիր բանասիրութեանց բեկորներ, Գողթան և Թուլեաց երգեր, պարերքներ, զրոյցներ, տուապէներ, գրի առնաւած գլխաւորաբարութիւններ, հերենացիքի և Փաւասոս Բիւլանդիքի կողմէ: Բայց ասոնց լեզուն, ինչպէս և Երկնէր երկին և երկիր, «Հեծաւա արի արքայի Արտաշէս», ըն՝ ասյր ինձ զծաւի ծիսակիւ բնականաբար չունեքն: Ուսկեւ,

դարեւն Հայերէնին գեղեցկութիւնը, այտ շատ հաւանաբար ապագային գրի առնող հեղինակներու կողմէ սրբագրուած են: Փողովուրդներու անգիր գրականութեան մէջ կրնանք հանդիպիլ դիւցողնապիտային երգերու և յաղթերգներու և չենք կրնար պնդել թէ անոնք բացարձակօրէն հայկական յոցում եղած են:


Ամէն ժողովուրդը կ'երգէ իր գիւցազուներուն քաջագործութիւնները: Ամէն ժողովուրդը առաւել կամ նուազ չափով կ'ունենայ անգիր բանահիւսութեան այդ վիճակները՝ առանց տիրանալու իսկական գրականութեան: Հայն ալ ունեցած իր անգիր գրականութիւնը, բայց քաջագական հանգամանքներ արգելք հանդիսացան անոր զարգացման:

Առանց գիրի Ազգային Գրականութիւն չի մշակուիր: Մեր գրականութիւնը ուրեմն Ս. Սահակէն ու Ս. Մեսրոպէն կը սկսի: և Ս. Մեսրոպէն առաջ Հայերէն գրականութիւն սրոնելը, որո իր թէ ջնջած ըլլար լուսաւորիչ, այրելսվ բոլոր Հայերէն գիրերը՝ անմիտ հէքեաթ մըն է» կ'ըսէ Հ. Անուհան:

Հայց Եկեղեցին էր որ գառա Հայերէն գիրերը: ստեղծեց ու զարգացցց Հայ Գրականութիւնը: Բարգէն Կաթողիկոս կը գրէ: «Պատմական իրողութիւնը սո՞ւ է: և թէ Հայ ազգը քրիստոնեայ եղած չըլլար, եթէ հայ քրիստոնեայ ազգը իր Սուրբ Գիրքը իր լեզուով գրելու և կարգալու պէտքն ու փոփաքը գացած չըլլար, հայերէն գիրեր պիտի չգտնուէին և Հայ ժողովուրդը այսօր գիր-գրականութիւն պիտի չունենար» (Հայց Եկեղեցի, Պատման, 1924, էջ 17-18): »

Ազգը պահեց իր տոհմային և կենցաւ զական կենսունակութիւնը գրականութեան շնորհիւց Անով անեցանք Աստուած-

ծաշունչը՝ մեր գոյութեան ու զօրութեան պատահներ։ Անով Եկեղեցին ունեցաւ ազդային ծէս, աստաւածախօս մտահաններ։ Հայ լեզուի չնորիւ Հայը ունեցաւ ընտիր թարգմանութիւններ գլխաւոր Եկեղեցական Հայոցիրու, ինչպէս՝ Եփրեմ Ասորիի, Աթանասի, Եւսեբիոս Կիստրացիի, Երկու Կիւրեղներու, Եպիփան Կիպրացիի, Գրիգոր Նիւևացիի, Պոկերեանի և ուրիշներու։



Կրօնական - թարգմանութիւնները կողքին, Հայ Վարդապահաններ Արքուուաէի, Պատառնի, Գորփիւրի և այլ իմաստակներս կարեւոր գրութիւնները Հայերէնի թարգմաններով, մեր Փողովորդի մտասուր վարգացման մեծապէս նպաստե-

ցին Վերջապէս՝ Շնորհալի և Նարհկացի Աստուծոյ հետ խօսեցան իրենց ոսկեղնիկ մոյցինի լեզուով։

Մինչեւ ԺԹ. դար, Հայ Գրականութիւնը ծաղկեցաւ վանքերու և Անապատաներու մէջ, և Հայ Եկեղեցականներու ըշքնչան աշխատանքին չնորիւ բարգմաթիւ նոր գրութիւններով Հայ Գրականութիւնը առանձինապէս ճշխացաւ։ Դարերու խառնորդին մէջ վանքեր հանդիսացան լուսատու վտառարաններ՝ Հայ ազգի մտաւոր վարգացման, ազգային վերազարթնումի և պահպանման ազգակններ ըլլալով հանդիրձ, Տասնինորդ գարուն, Հայուստանի մէջ շատ մը վանքեր ծաղկեցան։ Այսօր մը Հայը Երախտակիառութեամբ չի յիշեր Սիւնեաց Վարդապետանոցը, Նորեկոյ, Տաթերի, Կամրջաձորի, Սանահնինի, Հաղպատի վանքերը, Ամրատու և Գլուծորի Համալարանները, Վարպատի, Էջմիածնի, Երուսալէմի և Արմաշու Ժառանգաւորաց Վարժարանները։

Պատմութեան այն շրջաններուն երբ Եկեղեցին ակարտացաւ, գրականութիւնն ալ անկման շրջան մը ունեցաւ Եկեղեցաւոյ պայծառութեամբ՝ դպրութիւնն ալ ծաղկեցաւ։ Հայ Եկեղեցականը վանական կանքուացաւ միայն, այլ պայմաններուն հնարաւորութեան չափով ժողովուրդի գաստիրակութեան նույիքական գործն ալ կատարեց։ Այս իրողութիւնը կը տեսնենք Ս. Գրիգոր Լուսաւորչի, Մեծն Ներսէսի օրերէն սկսեալ մինչեւ մեր օրերը։

Միաւոտ չենք ըլլար եթէ ըսնենք թէ Ասեստարանի շունչով կազմուեցաւ մեր ազգային նկարագրեր և անփառան կրնանք յայտարարել թէ առանց Հայ Եկեղեցւոյ, Հայ Գրականութիւն, Հայ Ստեղծագործութիւն, Հայ ժողովարդի կրթութիւն և նոյնիկ Մատենագրութիւն գայութիւն պիտի շունենային։

Հայ կարծէ յիշեց թէ կոչ Արաւետի զանազան մտաերը, ինչպէս Եկեղեցական երաժշտութիւն, Յարտարապետութիւն, Բանգանիագործութիւն և Մանրանկարչութիւն կը պարտինք կայ Եկեղեցւոյ։

Հրօնական երաժշտութեան ոկզնաւութեան մասին քիչ բան գրանցւուի Բար-

գէն կաթողիկոսի կործիքին համաձաւն՝ ան անբաժան մէկ մասը կազմած է Ասկին դարեան մշակոյթին (Հասկ, 1935, էջ 119 - 139):

Հայ ձարտարապետութիւնը իր ազգային և հայկացի ասեղծագութեաթեամբ է. դարեն կը սկսի: Հայ եկեղեցիներու գրմբէթաւորումը՝ որ եկեղեցիներուն արտաքին փառքը կը յատկանչէ, Դ. գարուն իսկ գոյութիւն ունեցած է ըստ Գարեգին Արք. Յովանէֆիեանցի (Կոչնուկ, 1939, էջ 1072 - 1076): Հայ ձարտարապետութեան կոթողներ Հայաստանի բոլոր կողմերը կարելի է գտնել, ինչպէս Ս. Էջմիածնի, Հայիսկիմեանց, Գոյրիանեանց, Զուռթնոցի, Աղթամարի, Ասիի Մայր Եկեղեցին և այլ բազմութիւն վանքերու և եկեղեցիներու շինութեան աճին մէջ՝ որոնք Հայ ձարտարապետութեան գլուխ-գործոցներ են:

Իսկ Հայ Քանդակագործութիւնը զարդացաւ Հայ ձարտարապետութեան կողքին, Հայ վանքերն ու եկեղեցիները իրենց բարձրագունդակ և խորաքանդակ զարդերով նշանաւոր եղած են անցեալի մէջ: Հայ Առաքարերու վրայ երեցած երկրաչափական զարդագծեր, տաճարներու պատերուն խոյի գլուխներ, տաւնկերու, կենդանինե-

րու, թռչուններու, ինչպէս նաև Սուրբ Գրական նկարներ կ'ապացուցին զարդացումը Հայ Քանդակագործութեան:

Վերջապէս, Հայոց կողմէ մշակուած է նաև Գրչագրութեան արուեստը: Հայկակակ քաղաքական պատահարներու և հակաքրիստոնէական հալածանքներու, փրկուած գրչագրութիւնները արուեստի բարձր որժէք կը ներկայացնեն: Գրչագիր ծաղկողներու գործածած զարդագծերը, լուսանցագրերն ու թռչնագրերը Հայ Մանրանկարչութեան չատ գեղեցիկ փայլ մը կու տանւ:

Ուրիմն կը տեսնենք թէ Հայ Եկեղեցւոյ շնորհի Հայ Ժողովուրդի մտաւոր ու հոգեոր կեանքը իր բազմաթիւ երեսներով զարգացաւ և այս բոլորին միացումով կերտուեցաւ ազգային նկարագիրն ու մշտկոյթի ճոխութիւնը՝ որ մինչեւ այսօր սքանչացում կը պատճառէ համբաւաւոր գիտնականներու:

Գուրգուրանքով պահենք ու պահպանենք մեկի փախանցուած բոլոր ազգային ժառանգութիւնները՝ որպէսզի անազարտ պահենք Հայ Եկեղեցւոյ ու Հայ Ժողովուրդին իսկուկան գիտագիծն ու արուեստի բարձր մակարդակը:

ՍիՓԱՆ ՎՐԴ. ՄԻՍԵԱՆ-

Հօլիվուտ, Գալիք.



ԶԱՅԼՏ ՀԱՐՈՒՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Եմ «Հառաջանի կամուրջ»ին՝ Վենես.

— Մէկ գողսն իր քանս է եւ միւսն ապարանք —
Բարձրացած ծովու ալ' բներէն վէս-վէս՝
Ցու պով կախարդին՝ որպէս մի պատրանք,
Փըռած ըուշն ամպոս քեւեն հազար ամք՝
Կը ժայտի փառեսվն նեռու դարերուն,
Կը նայէին երբ շատ ազգեր հպատակ
Թեով առիւծի մարմար սիւներուն,
Վենեսիկն երբ կ'իշխէր նարիւր կողիներուն։

Կ'թուի նօր Սիափիլ մը ծովէն ելած՝
Աւարակներու իր եռարագով.

Վսեմ շարժումով մը նեռուն քառած,
Զըրերու ոյժին իշխողի փառեսվ —
Ազգաց աւարէն, անդուլ հսաւելով,
Կ'առնէին դուսրերն իր՝ օժիտ անգին,
Կ'տեղային գոհարք փողփաղուն ըողմով...
Ծիրանի հազար կ'ըլլար կոչունին,
Կ'անէր կանչուող իշխողներու փառքը ոյժին։

Լուս կ'թիավարէ կոնտոլավարն վէս,
Ի Վենես Թասոսն չունի արձագանգ.
Զի հնչէր յանախ նուազը այլեւս,
Կը փրկին մինչեւ ափունին՝ ապարանք ...
Գեղն է դեռ ներկայ՝ քայց անցեր է՝ փառին,
Տերութիւնն կ'իշնայ՝ քայց կ'ապրի բնութիւնն՝
Կայ դեռ Վենիսի երբեմնի նմայքն՝
Ամենահան վայրը խննդյներուն,
Խտալիս դիմակ, երկրի զուարենոթիւն։

Մեզ համար ունի այլ հրմայք սակայն՝
Պատմական անուն, ուրուականների,
Վրհատած անձանց, հրզօր շարքն երկայն՝
Լուռած, անկէնդաև հանդէն Տների։
Մերն է յաղթանակն անեղծանելի։
Ռիալգոյին հետ, Պետիկ, Մաւր, Շարլոք
Ձեն չնցուիր իսպառ, չեն մոռանալի՝

Կամար - պահ վկամի պէս ... սակայն վերջն էր լոկ՝
Լուսած եզերքին են բնակիչք նորոգ:

Մտածին անձեր կաւէ չեն զանգուած.
Խսկութեամբ անմահ, անօնք կը բերեն
Աւել' պայծառ ուղղ, աւելի սիրուած
Գոյցացութիւն, այն ինչ ու կ'արզիկ
Բախոր բութ կեանքին ... կու տան մեզ' նորէն,
Մահ'ցու կապանքին մէջ մեր վիճակին,
Նախ ախոր ... եսին ատածին փոխարէն.
Զեկով սիրտն որում՝ մեռած ծաղկունքին
Նորոգ անովիր կը լցուի ամայքն կրկին:

Ապաւէնն այս է մեր պարմանութեան
Ու մեր ծերութեան — մնալ անջոյս լիուած
Նախ, վերջն ալ գտնել Պարապութիւն միայն ...
Հոգն այս կը լցնէն էց աչիս դիմաց.—
Էութեամբ սոյզ այլ բաներ ալ կան բայց,
Երկրէն առաւել՝ գեղով լուսափայլ
Չեռով ու զոյնով. երկնէն գերազանց.
Քան անօրինակ աստղահոյն աննառ՝
Որ մատուցած է տիեզերքին այս՝ Մուսային Հաննարն:

Տեսածս երա՞զ քէ նիւզ — անցնին բող յինէն, —
Կու զան ուղիս նիւզ, կ'անցնին երազի պէս.
Ինչ ալ էին բայց — այժմ ալ դեռ նոյն են —
Թ'ուզեմ կրնամ զանօնք փոխել, բայց մտէս
Կը յօրդին բազում ձեւերով՝ զորս ես
Փնտուած կը բըւիմ եւ մեր զած եմ.
Անցնին ասոնք ալ բող — զի միտքն ո՞ղիս
Ապառողջ ցնորմներ զանօնք կ'նկատելի,
Ուրիշ ձայներ, տեսարաններ մեր ուրեց պատեմ:

Թրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

Տ Ա. Ր Ե Փ Ա. Կ

Տարւոյն օրերը ամբողջ, երեք հարիւր վարսուն հինգ,
Թուղթի վլրայ, այս զիւեր, առած եմ ափըս նորէն.
Օրեր անզոյն ու անդէմ, որոնց մէջէն պիտ' անցնիմք,
Առանց անշուս զիտնալու քէ մեզի ի՞նչ կը բերեն ...;

Անոնք մեզ ի՞նչ կը բերեն, մեզմէ արդեօֆ ի՞նչ կ'առնեն,
Առեւտուրէն այս աննուն ի՞նչ է մեր շահն ու վնաս.
Հարցերուն դէմ այս կենուո՞ս հոգիս, ուրար չը մնաս,
Ո՞վ զադոնիներ է կորզեր ամպարազիծ անհունէն:

Անզոյն, անդէմ օրերուն ի՞նչ գոյն պիտի ուզես տալ
Այս պահուն երբ մեր զանկին տակ ապառնին ու անցնալ
Երար ձեռնէ կը խլեն սղոց, կացին ու տապար.
Գոյները ի՞նչ են սակայն, պատրող փոչի ու շպար:

Երազ, ցնորք մինչեւ Ե՞րբ տեսիլներով ոսկենուր
Մեր օրերուն վրայ զորց հիւսեն իրենց դրասանգ.
Ի՞նչ փոյք մարդերն ըռուրն աղած նաշին մեր մահուր,
Նորաժաման տարին ալ երբ տայ իր սուր ահազանգ:

Կեսներին աւիսը պուտ-պուտ օրերն մեզմէ կը տանին,
Բայց մեր մաղքանն ըլլայ քոյ նոր օրերու դէզին դէմ,
Որ խլապէս ըլլան ՆՈՐ, կետների իմաստն մեզ բերեն,
Թուրակորէն չիրկեն չարիքն ու մեղքը հինին:

1. 1. 1983

Գ. ՃԱ.ՐԾԱ.Ր



ԲԱՆԱԿԱՐԱՎԱՆ

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ

1. — Երկուորիք. — Հայոց Գիր և Գրչութիւն գրքի (Տպ. 1973) 99րդ էջին ստորագլ թիւ 14 ծանօթութեան մէջ գրուած է. «Արամազդը կասկածել է, թէ հայրը կարող է ունենալ երկրորդ որդի ... ուստի նա սպանում է իր երկվորյացին և գցում ծովզ»: Այս խօսքի երկրորդ մասին բնագիրն է, «... և կտրեաց զերկառիս նորա և ընկեց ի ծովզ»: Այսինքն՝ կտրեց անոր երկուորիքը (ամորձիքը) և ծովզ ձգեց:

2. — Թվական. — Նոյն գրքի 163րդ էջին վրայ կը տեսնուին չորս տողեր, առաջած երաւաղէմիթիւ 145 ձեռագրէն: Այստեղ գործածուած ճճնական բառին

մէջ ագաղանագրուած թվականն մը մատանանշուած է, «1516, որին գումարելով զուարթնոցը, որը հաւասար է 6իւ, ձեռք բերուած է 1522 թուականը: Սա աւելորդ յոդնութիւն է և սիսակ հաշիւ: Յիշտառակարանը կ'ըսէ. «Արդ գրեցաւ ... գիրքս այս ի թուականիս հայկազո՞ն տումարիս Ութ հարիւր և եթներորդի», որ հաւասար է 1358ի: Զեռագրիս մէջ կան նուե յետագոյն յիշտառակագրութիւններ ԲՊԱ և ԽՃՂ թուականներով, բայց ոչ 1522-ը:

3. — Ղասարնի. — Սերամատիոյ Պատմութեան (Տպ. 1974) վերջին էջերուն մէջ կը գտնուի «Արենաստների օտար անվանումների Բառարան» մը, ուր «Ղասարնի» բառը կը տեսնուի հարցանիշով մը. Ղասարնի, Գասարնի, կը նշանակէ կտրենիցնող: Անթէպի մէջ յայտնի էր աղբիւր մը «Ղասարնի» բունարը անունով, որուն եղերքը թափիչները փայտով կը ծնէէին իրենց կտաւները մինչև որ լու ճերմինային: Այդ արհեստը շատ էին է

Ա. ՍՏԵՓԱՆՈՒՄԻՆ

Քեզի կու զամ, ով մեծ սուրբ, ընծայուելու կարողին,
Դուն որ իեանիզ զն բերիր մեր մելքիերուն համար բիր,
Քեզ կը բերեմ խունի, աղօրք, նոզիս նոյնպէս սիրառաւ,
Պասկաղիր անունիդ, ով հաւատէի հանատակ:

Չրհասկցան ենզ մարդիկ այն օրերուն ապերախս,
Չրհասկցան զործն այն մեծ, որուն համար դուն եկար.
Այսօր նոյնիսկ կան մարդիկ, որոնք ենզի չեն հանչնար.
Բայց կը ներես դուն անոնց անզիտութեան չարատանչ:

Դուն դարերով կը մնաս նոզիներուն մէջ պայծառ,
Սասդ մը ինչպէս մշավառ, մինչեւ հասնի օրն այն մեծ,
Ուր այս աշխարհն ու երկինք այլեւս զիրար հասկընան:

Դուն, ով մեծ սուրբ, ընդունէ իմ այս տաղ առաջին,
Վկայազիր եռ փառքիդ եւ անունիդ պատեհի,
Եկած սիրտէս իմ պարման, առհաւաչեան իմ վաղուան:

Գյորուր, 1955

ՆԱԶԱՐԵԼԻ Պ. ԶԱՓԱՏԱՐԵՍՆ

միջին որևէ լըքի մէջ. Մարկոս Աւետարանին էին Եթուասի այլակերպութեան ժամանակ անոր հագուստաներուն ստացած սպիտակ կութիւնը նկարագրելու մտքով կը գրէ. «Եւ ձօրձք նորու եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանելու»:

4. — Զինազարն. — Բազմագէպի 1979 տարւոյ հատորին մէջ, էջ 48, ձաւլուած գիրերու զերաբերով հին հաշիւ մը կայ, խանդաբերած ձեռվ, վասնզի սխալամբ «վեց հազարն» կարգացուած է քանից այն որ պէտք էր կարգացուէր ողհազարն: Ակնարուած հասուածք նշգիլի է ասպէս. . . . զի նախապէտ ընդ թափորին զգիրս դաշնադրեցաց զինազարն՝ երեք լիրէ որ նա առ ի մաժանեցուցանել զգիրս՝ զորս ձուլեաց, զինազարն ի չորս լիրէ, իրուս 200 լիրէ գրամ աւելի զին եղ ի զերայ վերոյ ասացելոց շինուածոց . . . և էտո . . . նաև առ այս՝ զի զրդուցեալ էր յայրաց թէ խարեցեալ է, զի զինազարն՝ երեք լիրէով հաճեալ է ձուլել, եւ մինչ այսպէս եղեւ 200,000 գիրն, որ առնէր 600 լիրէ, եղեւ 800 [ոչ 8000] լիրէ. և զինի այնր զորքան գիրս ձուլեաց, զինազարն չորս լիրէով ձուլեաց . . .»:

5. — Յովինանես Վրդ. Կիպրացիի անդին բուականը. — Մատենադարանի Բանաբերին 13րդ թիւին մէջ (1980), էջ 239, գրուած է հաւատող մը, ներկայացնելու համար խնդրայ մնարկայ թուականը.

Հայոց մեծաց ի թափականին,

Զի և Թ-ին (1480)

Բանս ասացաւ ի չափ տաղին: Այնպէս կը թուի թէ հայկական թուականը սխալ ներկայացուած, ըստ երեսոյթին պէտք էր ըւլոր Զի և Թ, որ հաւատար կու գայ 1480ին Աւատի վերոդրեալ տաղերու երկրորդը պիտի կարգացուի: Ինն հարիւր քանին (1480):

6. — Ըֆ. լքակ. — Դաւիթ Անյազթի շուրջ հրատարակուած է Յօդուածներու Ժաղովածու մը (1980) «որոնցէ մին վերապրուած է Հեթանագրեանք-ի Աւելածածը և Դավիթ Անյազթը» (էջ 143-210): Այդ դրբէ 208րդ էջին վրայ կը կարգանք. Քմայց թէ ինչ է Ըֆ (80) լքակը, մեղ մեաց անհականալիք: Ըֆ պէտք է կարգաւ ոչ

թէ 80, այլ ութեատան, 18, որ է 36ին կէսը: Լծակ = լուծ = զոյդ, Ըստ այսմ կ'ունենանք նետեեալ հաշիւը.

ԼԶ փակս 9 [միակս 9] = 36

Ըժ լծակս = 36

Թ քառեակս = 36

ԴԹ գիրս [4 × 9] = 36

որոնց չորսն ալ կը ներկայացնեն մեր այրութենի տառերուն թիւը:

7. — Վրացական Այբուբենի կերպիները. — Բազմագէպի 1981 տարւոյ 3-4 թիւ. ին մէջ, էջ 449-454, John A. C. Greppin յուսած մը աւնի, ոթանի մը նկատողութիւններ վրացական այրութենի ծագման մասին զերնագրով: Յարգին յօդուածած գիրը ծանր ինդիք մը հակատած է Մեռուպի վրացերէն չգիտնալու, քանի որ մէկը չի կրնար այրութենակոն գրութիւն մը կազմել է լեզուի մը համար զոր չի գիտեր: Ասէկ հետեւուցած են ուրիշներ թէ վրացական այրութենը կազմողը Մենորոպը չէր: — Մենորոպը մերժողները ուրիշ հնարին մը անունը չեն տուած ասկայն, Հարցը պէտք է գնել այլ կերպ: Բանի որ Մենորոպ վրացերէն չէր զիտեր, ուրիմն պէտք էր որ իրեն գործակցած ըլլար վրացերէնի հմուտ զիտնական մը: Այդ մասին Կորիւնի դրածը յստակ չէ (Վարք Մաշթոցի, 1930, Երուազիք, էջ 31-32): Բայց ժամանակակից միւս պատճենը, Մովսէս Խորենացի, որուն Պատմութիւնը ինքնուրոյն և արժէքաւոր աղբիւր մըն է Դժարու երկրորդ կէսին և Յ. Դորու առաջին կէսին պատահած դէպքերուն համար, կը գրէ որոշ կերպով: Փիսկ Մեսրոպաց երթեալ յաշխարհն վրաց, առնէ և նոցանշանգիրը տուեցեցնովիլ ի վերուստ չնորհան, հանդիք Զաղացիս ոմամբ թարգմանան նելլէն և հայ լեզուին (Պատմութիւն Հայոց, 1865, Վենետիկ, էջ 248): Ուրիմն վրացական այրութենը կերտելու մէջցին Մենորոպին գործակցած է ոչ միայն վրացերէն լեզուին այլև Շենլէն և հայ լեզուներուն թարգման «գրագէտ» Զաղաց: Այս իրազութեամբ բնական կերպով կը բացարուի վրացական այրութենին ունեցած առնչութիւնը յունական և հայկական այրութեններուն հիմ:

Ն. ԱՐՔ. ՄՈՎՍԵՍԻՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԿԵՐԸ

Ա. — ՎԱՐԴ ՄԱՇՏՈՑԻ

Այս յօդուածաշարքին նպատակն է հաստատել թէ Մաշտոցի Վարքին հեղինակը, Կորիւն Վարդապետ, հեղինակն է նոյնպէս Գրիգորի վարդապետութեան, ինչպէս նաև Ագաթանգեղոսի եւ Փաւստոսի Պատմութիւններուն:

Յօդուածաշարքը պիտի բաղկանայ յորս մասերէ: Առաջին մասով պիտի տրուին շարք մը հատուածներ, առնուած Մաշտոցի Վարքէն, որպէսզի ընթերցողը աչքի առցեւ, ունենայ Կորիւնեան բառամթերքը եւ ոճը ներկայացնող պատկեր մը:

Երրորդ մասով պիտի տրուի հատուածներու շարք մը, բաղուած Ս. Գրիգորի Վարդապետութենէն, ոյց տալու համար թէ այդ գրուածքը ծարյէ ծայր կը ներկայացնէ Կորիւնեան նոխ եւ ինքն անյառին բառամթերք եւ հարազատ ոճ, ինչ որ եւ բաշխիքն է հեղինակի նոյնութեան:

Երրորդ մասը պիտի ըլլայ հատուածներու հատընտիր բաղուածք մը Ագաթանգերով Պատմութենէն, ուր պիտի տեսնըւին դարձեալ Կորիւնեան նոյն բարացուցական բառամթերքը եւ ոճը, որոնք տեսնըւեան նախորդ երկու եւ երկերուն մէջ:

Չորրորդ մասով պիտի ներկայացուին հատուածներ Փաւստոսի Պատմութենէն, որոնք գրուած են նախորդներուն նման Կորիւնեան բառամթերքի եւ ոճի ազատ կիրառութեամբ:

Ստորեւ արտագրուած հատուածները թուագրեցինք, որպէսզի դիւրութիւն ընծայուի կատարուելիք համեմատութեանց, որոնք պիտի թելադրուին յօդուածաշարքի յաջորդական մասերուն մէջ: Ընդգեցինք այն բառերը, որոնք բարացուցական են Կորիւն Վարդապետի կիրարկած լեզուն:

1. — Եւ վասն նորին լուսաւոր վարդապետութեան, եւ իրեշտակարար կրօնիցն առաքինութեան զմուած ածելով լիշապա-

կարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել: — Վարք Մաշտոցի, Գ. Ձնտգլական, երուսաղէմ, 1930, տող 4-7:

2. — Եւ արդ առեալ նախարաննեցուք եթէ իցէ՞ համարձակութիւն գրով նշանակել զվար արանցն կատարելոց, ո՞չ ի մէջ առուստախօսեալ մերոյն կարձեօր վիճարանելով, այլ յօրինակացն տուելոց զընդդիմակացն բարձրացուցանել: — Տ. 21-25:

3. — Եւ ի Մովսիսական պատմութեան յայտնի է երանելեաց արանցն ազնուականութիւն, եշմարտութեան հաւատոցն հաստատութիւն, աստուածումերձ աստուածամայիս կենացն զայելյութիւն, սրանչեական կենացն պայծառութիւն: — Տ. 33-37:

4. — Սոյն օրինակ եւ ամենայն գիրք նորեգաւում նշանակեալ ունին զրագութիւնս ամենայն օրաց: — Տ. 60-62:

5. — Իսկ մեծին Մովսէսի զառաւելագոյն զաստուածամուխ մերձաւորութիւն ամենայն եկեղեցական զրովք նշեցուցեալ, զորոյ եւ զտղայութեան զկայտառութիւնն յայտ արարեալ աստուածելին օրինացն, նաև զայլազգոյն զՅոթորի եւս զիրատն չանցուցիեալ անզիր: — Տ. 90-95:

6. — Բայց ո՞չ միայն զմեծամեծսն, այլ առաւել եւս զիեթեւագոյնսն՝ բարձրագոյնս անարգամեծարն Քրիստոս որ սակաւիկ ինչ զծախ իւղոյն յարգէ: — Տ. 107-110:

7. — Հանգոյն սմին եւ Հուկաս յրսկիզըն Առաքելագործ մասենին դնէ: — Տ. 160-161:

8. — Առն, զոր ի նախակարգ բանիս, նշանակեմք, վասն որոյ եւ փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տառ քանական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ: — Տ. 165-188:

9. — Ի մանկուրեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն ...: Տեղեկացեալ եւ հմուտ եղեալ աշխարհակեաց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուետիւն իւրոց զուգականացն: — Տ. 188-195:

10. — Եւ այնպէս, ամենայն փարձութեանց ի վերայ հասելոց կանաչական բառքութեամբ տարեալ եւ պայծառացեալ, ծանօթական եւ հանոյ լինէր Աստուծոյ եւ մարդկան, ու Տ. 215-218:

11. — Նոյնպէս առաւել հոգ ի միտ արկանէր զիամաւճաւահանս սփոփիլոյ. — Տ. 232-3:

12. — Յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց մեծաց որոյ անուն նախաէր Սահակ, զոր պատաւական գտանէր՝ նմին փութոյ հաւանեալ. — Տ. 240-243:

13. — Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարիաց ինչ օճան գտանելոյ: Որում պարգևէր իսկ վիճակ յամենաւնենուին Աստուծոյ՝ նայրական շափուն ծնեալ ծնաւնդս նորդ եւ սբանէլի: Առերբ ազգը իւրով՝ նշանագիրս հայերէն լեզուին. — Տ. 301-306:

14. — Յորոց թուղթս աւետազիրս հանդերձ ընօրինասու պարզեւօքն, եւ ամենայն իւրայիւթն՝ ի շնորհացն Աստուծոյ նանապարհորդ լինէր. — Տ. 331-333:

15. — Քանզի յլաստուծոյ առեալ եւ աստուածազիր հրաման ի բազուկս այրն աստուածատես ի լեռնէն իջանէր, այլ վասն վրիժագործ ժողովրդեանն, որոց թիկունք ի տշունիսն եւ Կործան յերկիր, տիրագրուժք իւրեանցակուռ ծուլածուին երկիր պազանէին եւ գնորին նրամանաբերն սրտառուէ սրտարենի կացուցին. — Տ. 339-345:

16. — Բայց մի որ յանդգնազոյն վասն ասացելոց զմենք համարնացի թէ զարդ զայր մի խոնարհագոյն ընդ մեծին Մովսէսի՝ ընդ աստուածախօսի՝ սրբնէլագործին նմանցացեալ հաւասարեան. — Տ. 352-5:

17. — Որոց առեալ զամնայն նախարարագունդ աւագանւոյն ամրոխ, ի բաղարքէն եկեալ պատահէին երանէլույն զափամը թահ գետոյն, եւ զյանկալի ոլչոնն միմեանց տուեալ, ուստի եւ բարրատօք ցնծութեան եւ երգօք հոգեւորօք եւ բարձրագոյն օրենութեամբ ի բաղարք դառնային. — Տ. 361-366:

18. — Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագւորէն՝ սկիզբն առնելոյ զառւմադուծ կորմանսն Մարաց, որբ ո՛չ միայն վասն դիւական սատանայակիր բարոցն իւրազուրեան, այլ եւ վասն խեցքեկագոյն և խոշորագոյն լեզուին գժուարամատոյց էին, առ ի յարդարել եւ զնոսա հարանց աման ծնունդս, առեալ պարզախօսս, նռետորաբանս, կրթեալս, աստուա-

ծառուք իմաստութեանն ծանօթս կացուցանէին: Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանօքն օրինապատգամացն, մինչեւ ընաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն զերծանէլ. — Տ. 368-376:

19. — Եւ ի ծեռն առեալ այնուհետեւ աստուածազործ մշակութեամբ զաւեսարանական արուեստն ի թարգմանել, ի զրկել եւ յուսուցանել, մանաւանդ հայեցեալի տեսանաբարրարա հրամանացն բարձրութիւն որ առ երանելիին Մովսէս եկեալ վասն ամենայն իրացն եղելոց՝ յաստուածելին պատգամացն բարձրութիւն աւանդելոցն՝ մատենագրել առ ի պահեստ յաւիտեանցն որ գլուցն էին. — Տ. 378-384:

20. — Զոր եկեալ կտարեաց ալենափրկչին Քրիստոս ընօրինութեամանաւն, եթէ «Եղէք ընդ ամենայն ազգս», եւ եթէ «Քարոզնացի աւետարանս ընդ ամենայն տիեզերս»: Ուստի եւ երանելի հարցն մերոց համարձակութիւն առեալ, յուսալից փութով եւ երեւելի եւ արդինակատար զիւրեանց մշակութիւնն ցուցաննն. — Տ. 390-395:

21. — Եւ անդ ընկելական սովորութեամբն ի կիր արկեալ զգարդապետութիւնն հաւասարութեամբն բարձրաշտին Շաբաթայ, լի առնէր զգաւառն ողջունիւ աւետարանին Քրիստոսի. — Տ. 446-9:

22. — Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ զարդապետութեանն, առաւել զգացանիր զգայրեանագոյն զիւլազարարոյ կողմանցն. — Տ. 459-461:

23. — Սյր սուրբ եւ երեւելի հայրարարոյ ժառանձաւորաց եկեղեցւոյ. ապա եւ զերկիրն Սիւնեաց զանսկանօք լոյոյ: Յորում ժամանակի պարգեւեալ յլաստուծոյ հասանէր ի զլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Միսականն Վասակ, այր խորհրդական և հանճարեղ եւ յառաջիմաց ընօրինասութեամբն Աստուծոյ. — Տ. 464-470:

24. — Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգ ի միտ արկանէր սիրելին Քրիստոսի եւ վասն բարբառուական կողմանն, եւ առնոյք կարգել նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյն մա ի ծնառնէ. — Տ. 475-478:

25. — Եւ վասն ժամագործ ազգին՝

բարբարոսաց եւ եկեղեցեաց հաստատութեան, եւ մեծամեծ պարզեօք պատուեալ: Վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին զարդունիսն, անընկալ թողոյր. — Տ. 545-8:

26. — Եւ նոցին ռոճիկ կարգել ի պատեհագոյն տեղիս, յոր եւ երանելին զվարդապետութիւնն իւր ի գործ արկեալ եւ ժողովելոցն քաղցրացուցանէր. — Տ. 561-4:

27. — Դարձեալ առաւելեւս երկիւղածն յլևսուժոյ արքայն Ալուանից՝ միամիտ փութով հրաման տայր սատանայակիր եւ դիւամու ազգին՝ սաստի թափել զերծանել յունայնավար հնացելոցն եւ հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի. — Տ. 617-21:

28. — Եւ եկեալ ի սովորական տեղիսն զբնելական ողջոյնն՝ Սրբոյն Սահակյա եւ ամենայն պատահելոցն տուեալ, պատմէր նոցա վասն այնր եւս նորագործ իրացն. — Տ. 652-5:

29. — Եւ այնպէս զամենայն ժամանակս իրեանց յընթերցուածն զրոց ծախէին հարքն զտիւ եւ զգիշեր, եւ նովին ծաղկեալ եւ շահաւետնալիք օրինակ բարեաց ուստիմասէր առընթերակայից լինէին, մանաւանդ զի ունէին պատուիրանս զգուշացուցիչ յասուածակարգ պատգամաւրացն. — Տ. 689-693:

30. — Եւ այնպէս յամենայն կողմանս Հայոց, Վրաց եւ Ալուանից զամենայն ժամանակս կենաց իրոց, զամառն եւ զմենոն, զտիւ եւ զգիշեր անվեհեր եւ առանց յապաղելոյ իսկ իւրով աւետարանական եւ ողջապատում զնացիւ ըն առաջի թագաւորաց եւ իշխանաց եւ ամենայն նեթանոսաց անդդիմակաց ի հակառակորդաց զամենակի նախրէին Յիսուսի անուն կրեաց յանձնին. — Տ. 711-7:

31. — Ուստի եւ յայտնի իսկ է եւ առանց խուզելոյ, եթէ ո՞չ վասն անձին ունենաւեն այլ համուշաւրի յուսումն զայն գործէր, որ է օրինակ ամենայն հնազանդելոց. — Տ. 769-772:

32. — Քանզի միապատիւ է աստուածական եւ ոչ բազմաբար. — Տ. 785:

33. — Եւ այնպէս յառաջ ամենայն ասուածեին գանձուցն վայելչութեամբք լցեալք պարարտացեալք խաղացեալք գային, ի բազում ժամանակն նովին ի նոյն կանկեւալք եւ ի նմին հանապարդեալք. — Տ. 800-803:

34. — Վասն որոյ սիւննողոսական հայրապետացն եկեղեցեացն սրբոց նշանակեալ ազդ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակյա եւ Մաշթոցի: Եւ նոցա ճշմարտաչէր փութով զայն ի միջոց բարձեալ աշխարհահամալ արտաքոյ իւրեանց մերժեցին, զի մի ի լուսաւոր վարդապետութիւնն ծովին ինչ սատանայական յարիցէ: Ենտ այնորիկ զէպ լինէր նովին ճշմարտութեամբ երանելւոյն Սահակյա լցեալ աւորքը երկայն ժամանակօք եւ վայելչացեալ աստուածաբէր պատղոյն բարութեամբք. — Տ. 606-815:

35. — Իսկ երանելի զուգականին լրեալ, զմաշթոցէ ասեմ, բազում անձկայրեաց տրտմութեամբ եւ արտօսրագութ ողբովք եւ ծանրարախիծ հոգովք պաշարեալ զնէր. զի թէ առարեան սուրբ ոչ գտեալ առժաման զընդեկակիցն զՃտիմոս' անհնակիստ զնուույն ասէ, որչափ եւս առաւել միանակամայն գհրաժարելոցն սաստիկ կարիս մնացելոցն է համարել. — Տ. 640-645:

36. — Եւ զայգ եւ զցիշեր պահօք եւ աղօթիւք եւ ուժզին խնդրուածովք եւ բարձրագոյն բարբառովք աստուածապիք պատուիրանացն հրամանս յուշ առնելով զգուշացուցանելով ամենայն մարդոյ. — Տ. 652-5:

37. — Եւ նովին հոգեկրօն վարուք հասանէր սրբոյն Երիսոսակոչ կատարումն յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեան. — Տ. 665-7:

38. — Եւ համբարձեալ զձեռսն հանապատարած յերկինս, զամենայն մնացեալն յանձն առնէր շնորհացն Սատութոյ. — Տ. 671-3:

39. — Եւ երկրորդն այլ աշակերտ Յովհան անուն, «յր իսկ սուրբ՝ վարդապետաչէր եւ նեմուբառապատում. — Տ. 912-3:

40. — Ոչ ի պատիւ ինչ սրբոցն Աստութոյ որք ամենապար եւ կենդանանութեան այլ յօրինակ բազակի նոգեւոր ծննդոց իւրեանց. — Տ. 939-941:

Անշուշտ կարեի էր երկարել այս շարքը, բայց այսքանը կրնայ բաւարար համարուիլ առաջադրուած նպատակին համար:

Ն. ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ

ՊԱՏՄԱՎԱՐ

ՅՈՎԱԿԻՓԵՄԻՆ

Յովակիփեմինը (կամ **Յովակիփեմինը** հանը), 1726—1806, Ժ. Դարի նըկորդ կէսի հայ ազատագրական մաքի ու լուսաւորական շարժման խոչըն ու յայտնի դէմքերից մէկն է եղած:

Յովակիփեմինը հայաբան են արուել Ժ. Դարի սկզբին՝ Շահ Արա Առաջինի կողմից հայերու բնագագղթի ժամանակ: Հայաբաննէն անցնելով Պարսկաստան, Արանք բնակութիւն են հաստատում Համագան բազգում, ուր և ճնշում է Յովակիփեմինը:

Մանուկ հասակից նա զրկւում է մօրից, իր հայրը առաքական վարձերով մեծ մասամբ եղել է Հնդկաստանի Կալկատա քաղաքում: Միակ անձը որ զրադաւել է իր որդու գաստիարակութեամբ, եղել է նրա մեծ պազց' Միքայէլը, թէ վերջինս նոյնպէս զրազուել է առաքորզ ու ճանապարհորդութիւններ կատարելը: Մանուկ կմինը մեծ մասամբ իր մեծ պապից է լսել Հայաստանի և հայ ժողովրդի մասին Սիսնիքի ապատագրութեան պատմութիւնը, Արանից է իմացել հայ ժողովրդի ծանր վիճակի մասին: Իր պապի հետ ունեցած այդ զրոյցները մեծ ողջեցներիւն են թողել պատառու վրայ:

* Տարիներ ետքը կմինը փոխադրում է հօր մօմ՝ Կալկատա, ուր ընդունում է Անդրիական դպրոց: Կալկատայում կմինը շատ նշանակ չփում է ունեցել Անգլիացիների հետ, առեալ է Անգլիական զօրքերու զինավարժութիւնները: Կմինը այսակ յանդում է այն մաքին, որ ազգակիցների արտագրական պայքարին օգնելու համար ամֆաք է առնըրել, ապագական գործը, որովհետեւ գուշ՝ պահպան որ ընդգծել է իր յուշերում, ուստի զարթիւնների դէմ մղած պայքարում ունի իր վճռական դերը:

Յովակիփեմինը Եւրոպայում զինուուրական կրթութիւնը ձեռք բերելու իր ցանկութիւնը յայտնում է հօրը, բայց վերջինս կարուեկ կերպով մերժում է, Այսուեղ Յօվակիփեմինը կմինը հակառակ իր հօր կամքին վարձւում է Անդրիական մի նաւում որպէս սկավարծ բանուոր, և ուզեւուում է Անգլիա 1751 թուի Փետրուարի 14ին՝ դատարկ գրպանով և առանց ձեռնային դգեստի:

Կասկած չկայ որ կմինը լունդունում շատ գժուարաթիւնների է հանդիպում, բայց ի վերջոյ Անգլիացի յայտնի գրող, հասարակական-գործի էլ կմժոնդ Բյուրքի և ապա Նորթումբրիելինդի դքսի օգնութեամբ տեղաւորում է Վուլփէի անգլիական ապամոնական ակադեմիայում:

Նորթումբրիելինդի դքսին գրած բացարականում, կմինը հոնգամանօրէն պարզաբանում է իր Լոնդոն քալու շարժաւիթները, նպատակը և մասամբ հետագա անելիքները: Այդ բացադրականում, որ ամբողջութեամբ բերուած է նրա ինքնակենագրութեան բնոյթ ունեցող գըրքում, ըսուած է թէ ինքը նպատակի մը համար եկած է Լոնդոն, սովորել, կրթուել ու մարզուել, ու վերագանալ հայրենիք և նուրիսուել հայրենիքի ազատագրութեան զին գործին: Յօվակիփեմինը նախապէս Եւրոպա գնալու իր նպատակին առթիւ խօսում է նաև իր հօր գրած նամակում: Այդ նամակում շեշտաւած է որ ինքը լոնդոն է գնացել սովորելու պատերազմի արուեան, որով պէտք է պատերազմել բալոր անոնց դէմ, որոնք հալուծում են հայ պազցը ու նրան գերի պահուած:

Առանց այդ արուեստի, անհնար է ազատել հայրենիքը տարբների տիրապետութիւնից:

Վուլփէի կմինը մնում է տասներեք ամիս: Սովորելուց յետոյ, կմինը ցանկութիւն է յայտնում մասնակցելու Անգլո-Ֆրանսական պատերազմին և իր բարեկամների ու հոգանաւորների համաձայնութիւնը ստանալով մեկնում, է ապամոնական: Այդ քայլը առնելով, նա համոզուած էր որ աւելի լաւ է համարել գրպոցը անսուլթեամբ զարգութեամբ գրադպանութեամբ փոխարէն կոսուի գնակ:

և գործնականում սովորել պատերազմական արուեստը:

Ըստգմադաշտում էմինը ցուցաբերում է չափանուած խիզախութիւն, յանդկնութիւն ու հմտութիւն, արդարացնելով իր նովանուորողների յոյսերն ու սպասումները: Պատերազմի կատակցութեամբ Հռովարդիայում եղած ժամանակ, էմինը հանդիպում է ունեցել այսնեղում գտնուած հայ առաքարանների հետ:

Այդ մասին էմինը իր հիմնուագրութեան մէջ ըստ չի խօսում, բայց իր մօտ բարեկամներից և աջակցողներից մէկի՝ Տիկին Մոնթէկոյի մի համակում առուած է, թէ էմինը խորդդակցել է Հոլովոդիայի քաղաքների հայ տուերտականների հետ, յայտնել է նրանց իր հնատագայ գործունեալիքներան ծրագրի մասին և սովորել է նրանց հաւանութիւնը:

Ցովսէի էմինի մտայլացումների մասարին մօտաւոր գաղափար է տալիս Վրաց Հերակլ թագաւորին նրա գրած նամակը: Այսուղ էմինը նաև զարգացնում է հայ-գրացական միացեալ պետական սահմանը լու գաղափարը, յայոյ խօսում է այն մասին, որ Երովոպական ժողովուրդների յաղթանակներն ու հզօրութիւնը ձեռք չեն բերուել միայն բազի ոյժով, այլ ամէն ինչ կատարուած է արուեստով ու իմաստութեամբ: Ոչ մի ազգ հզօր չէ առանց իմաստութեան:

Էմինը դառնալով Հերակլին ընդգրծում է, թէ այն ամէնը, ինչ որ գիտութեան վրայ չէ հիմնուած, որքան էլ նզօր լինի ու բարձր, նմանուած է մի նունի, որ շինուած է առաջի վրայ: Ցովսէի էմինը Հերակլին յիշեցնում է թէ ինչպէս նուսաց կայուրը Գետրոս Առաջինը սովորեց, իմաստութիւն ու գիտութիւն ձեռք բերեց և իր թագաւորութիւնը հզօր գործուց: Այնուհետեւ էմինը իր նամակում սրտի խորին կոկիով անդրադառնում է հայ ժողովրդի ծանր ու գծուարին կացութեան և ցանկութիւն է յայտնում զինուորական ծառայութեան մասնել Հերակլի մօտ և իր ուժերուն ներած չափով օժանդակել Հայաստանում և Վրաստանում զինուորական արածման և գլխաւորաբեր ժողովրդի լուսաւորութեան գոր-

ծում, Եւրոպական ռազմական արուեստի ոսկով բանակը վարժեցնելուն ու կազմակերպելուն և օտարների ճնշումներից ու հալածանքներից ժողովրդին ազատագրելուն:

Հայ-Վրացական միացեալ պետութեան սուելման գաղափարն այն ժամանակուայ պայմաններում աւնէր իր կարեւոր քաղաքական նշանակութիւնը: Էմինի տեսակէտն ունէր իր առանձնայատուկ նշանակութիւնը և այսուն չէ առաջի վրացի ժողովրդներն չեն կայ և վրացի ժողովրդներն չեն կարող իրենց ազատագրութեան և անկախութեան համար յաջողութեամբ պայքարել թէ՝ թրքական և թէ՝ պարսկական պետութիւնների դէմ:

Այսուղ շատ հարկաւոր է միաւորել երկուսի ուժերը և նրանց գլուխ դնել մի մարդու, որի հեղինակութիւնը ճանաչուել է լինէր երկու ժողովուրդների համար: Օրուան մարդը և հեղինակութիւնը Հերակլ թագաւորն էր, որի տնամական ծագումը կապւած էր Բագրատունեաց առնմի հետ և ընդունելի էր ինչպէս վրացիների՝ այնպէս էլ հայերի համար:

Նայն այս գաղափարը դրուերուած էր նաև Մադրասի խմբակի հրատարակուած Շլորդայթ Փառաց գրքում, որի շարուդացնանը, ամենայն հաւանականութեամբ, իր մասնակցութիւնն է բիրած նաև Ցովսէի էմինը:

Էմինի Հերակլին գրած նամակն արծարծում էր այն միտքը, թէ որիէ ազգ միւս ազգերի կողմէից ճանաչուած և յարգուում է միայն այն դէպքում, երբ ունի նզօր պետութեան հզօրութիւնը և ուժեղութիւնը հիմնուած է, առաջին հերթին, գիտութեան և արուեստի վրայ: Գիտութիւնը լու էմինի նշանակում էր, բայց զանազան երեսյթներին ու բնագաւառներին վերաբերող գիտելիքների պաշարից նաև կրթութիւն, գաստիարակութիւն և երմանութիւն, լուսաւորութիւնն ու քաղաքակրթութիւնը ժողովրդի մէջ արածելու համար:

Իսկ արուեստի տեսակէտում էմինը համարում էր գերազանցապէս առզմական

գործը, պատերազմելու և յաղթելու կատարեալ հմտութիւն, իմաստութիւն ու կորողութիւն:

Էմինը շեշտում է օրինականութեան պահպանման և օրէնքներու կարեռութիւնը պեսութիւնը ամուր պահելու դիրքում և գործում: Անշուշտ բոլոր բարութիւնները իմաստութիւնից են առաջանում, շեշտում էր նա, բայց իմաստութիւնն էլ չոք չէ առանց արդարութեան, որի հովանին օրէնքն է:

1760 թուականին Էմինը ուղարկուում է Հայրական: Հայրենի երկրու ճանապարհորդեիս, Զինիս գիւղում մի համաքրիր դէպէ և պատահում է իմինի և գիւղացիններուն միշկ սկսուում է մտերիմ խօսկցութիւն: Դառնալով գիւղացիններին՝ մտերմարար հարցնում է, թէ ինչո՞ւ նրանք պատահեն, ինչո՞ւ սեփական թագաւոր, պետութիւն չունեն:

Գիւղացինները Էմինին պատասխանում են, թէ իրենց ազատութիւնը անգենականում է լինելու: Այս հարցին՝ որ Էմինը հարցուցած էր գիւղացիններին թէ մ՞ի չ ձեզ այդպէս հաւատացըրել, հետեւում է պատասխանը՝ նեկեցեց Սուրբ Հայրեռը, որոնք ասում են թէ հայ ազգը աշխարհի սկզբից հպատակ է եղել և այդպէս էլ պէտք է մնայ:

Այս խօսակցութեան ընթացքում, Էմինը գրպանից հանում է Մովսէս Խորենաց Հայոց Պատմութիւնը, որից անդի քահանան հասուածներ է կարգում հայոց թագաւորութեան մասին:

Դանոնից յայոյ, Էմինը պատմում է գիւղացիններին Եւրոպական ժողովրդների մասին, թէ ինչպէս նրանք պատահ են ապրում, և Աւետարանն ու սուրբ գրքերը չեն հասկցել այնպէս ինչպէս հայ հոգեւորականներն են բացատրում: Եւրոպական պատմութեան մասին գիւղացինները խաչը գրոց են գարձերել, որով քաջ զինուորները կուռում և մեռնում են հասկառակորդի դէմ մզուած մարտերում: Էմինը շեշտում է գիւղացիններին որ բանական էակը պէտք չէ հանգուըրծի ուրիշին գերի լինել, սոյնիսի պէտք չէ ուղենայ որ իր կրօնակիցները փարձեն ռանանալ իր վրայ: Էմինը պարզապէս բացատրում է գիւղացիններին թէ նախա-

խնամութեան կողմից բոլոր մարդիկ հաւատար են ստեղծուել, որպէսզի պատշաճ օրէնքներով կառավարուեն նոյն արդարութեամբ:

Հետագայում Էմինը գնում է Կարին, իսկ յետոյ՝ Բայազիտ, այսակղից էլ, 1761 թ. Ապրիլի վերջերին՝ Էջմիածին, որտեղ Հոգեւորական գաւը, բացի օրուան կաթողիկոս Յակով Շամախիսցուց, անհամակիր են գտնուում նրա նկատմամբ: Կարելի է ենթադրել, որ Էմինը իր ծրագրերի մասին խօսել է Կաթողիկոսի հետ:

Նոյն թուականի գորնան վերջերին, նոյն գուրս է գտիլիս Եջմածինից և ուղեւորուում է Լոնդոն: Այսակ իր բարեկանները միջոցոս անցագիր ու յանձնարարականներ է ստանուած Լոնդոնի Առևական գեւսպան Գոլեցինից եւ, 1762 թ. Ցունաւարին՝ արդէն Գետերկուրդում էր: Էմինը համոզուած էր, որ Հայաստանի պատասխանը կարող է իրականանալ Ռուսաստանի օգնութեամբ:

Յովսէի Էմինը մօտ մէկ տարի մնում է Ռուսաստանում և բանակցութիւններ վարում Զարական կառավարութեան մի շարք ներկայացուցիչների հետ: Ազառ ուղեւորում է Անդրկովկաս և 1763 թ. գարուանը հասնուում է Թիֆլիս: Հոյն նրան ընդունուում է Վրաց թագաւոր Հերակլէ, որը չափազանց սկզբուում է Էմինի գաղափարներով: Տեսակցութեան ընթացքում, Էմինը խորհուրդ է տալիս գպացըններ բացել, որտեղ սովորեն 7-16 տարեկան պատասխաներ, իսկ 16-20 տարեկանից կազմել գումարտակներ, Եւրոպացինների օրինակով, նրանց վարժեցնել ուղմտկան արուեստը, զինքի գործածութիւնը: Ամէն օր նրանց համար կազմակերպել զրոյցներ՝ պատմութեան հերոսական դէմքերի մասին: Այստեղ Էմինը կը շետի 21 տառեկան հասակը, երբ նրանք մարզուելով կը գտանան չաւ և հմուտ զինուորականներ, և նոյն ժամանակ կը գարդանայ նրանց իմաստութիւնը, որը պիտի ծաղկենի և լուսաւորի երկիրը, ինչպէս որ նզել է Եւրոպայուում:

Յովսէի Էմինը յայս աւնէր ե զստան էր կը գոյ ժամանակ, երբ հայերը կը միանան վրացիններին, կը կազմեն զօրտա-

առ բանակ, միասնաբար կը տապալեն սատր պետութիւնների դատան լուծն ու ազատ կը լինեն բանակալութիւնից:

Էմինի միակ լոյսն ու ցանկութիւնն էր ազատել հայերին, սաեղճել հայ-վրացական զինակցութիւն և ապաւինել Ծուսատանի հոգանաւորութեան: Այնուհետեւ նա գնում է Հարաբազ և Հնդկաստան:

Կոլկաթա վերագանալուց յետոյ Էմինը չի հրաժարում իր ազատագրական պայքարից: 1773 թուականին մեկնում է Մադրաս և իր մասնակցութիւնն է բերում այդտեղ եղած ազատագրական խօսքակի գործունէութեանը: Մագրասում եղած ժամանակը Շանմիրեկանի աջկցութեամբ իր գրածում է Մագրասի հայ վաճառականներից որոշ գումար հաւաքել և գնուլ արեմտեան Հայաստան, Ս. Կոսրապետ վանքի վանահայր Յովանն Ծպիռոսի կոպոսի մօտ, որ ձգում էր կազմակերպել ազել ազատագրական շարժում: Այդ փորձը, սակայն, անյօջօղութեան է մատնում:

1780 ական թուականներին նա գրեց «Յովսէփ Էմինի կեանքն ու Արկածները» յուշագրական գիրքը, որ լոյս տեսաւ 1792 Թուականին, Անգլերէն լեզուով:

Յովսէփ Էմինը հայ ազատագրական շարժումն փայլուն գործիչներից մէկն է: Անոր քաղաքական գործունէութեան բուն սպատակն էր՝ պայքարել հայրենիքի ազատագրման ինսդիր: Նա միշտ էր պաշտպանում էր ժողովրդների քաղաքական ազատաթեան գաղափարը, քարոզում ու քաջալերում էր ազատակիրութիւնը: Նրա գերագոյն և բուն սպատակն է եղել իր ժողովրդի ազատագրութիւնը ստարենի տիրապետութիւնից: Ազատութիւնն ու ազատակիրութիւնը համարել է բարձր գաղափար:

Էմինը քարոզում ու քաջալերում է լուսաւորութիւն, նա այդ անում էր, նպատակ ունենալով գործոցներ բանալ և աւսում ջամբել բոլորին, այլև ժողովրդի

միջից յետանաց սովորութիւնների վերացումը, ագէտ հոգեսրականների ստորագուցիչ քարոզներին սանկնդիր չէիննելու խորհրդով: Էմինը հոգեսրականներին քարկոծում էր այն բանի համար, որ նրանք ժողովրդին պահում են խաւարի ու ագիտութեան մէջ: Նա քննադատում էր նաև հայ առետրականներին, որպէս նրանք շատ անտարբեր էին հայրենիքի ազատագրագրութեան գործին կատամարել:

Էմինը մարդասէր էր, միշտ էլ քարոզում էր հիւանձիմ: Մարդ էակը, անկախ գուանանքից ու ազգային տարրերութիւնից, պէտք է որ լինի ազատ ու անկախ՝ ուն էմինի սկզբունքը:

Յովսէփ Էմինը միշտ էլ ջատագովում է օրէնքը: Ժողովրդի զարգացման ու ամրապնդման համար, բացի գիտութեան և լուսաւորութեան տարածումից, շատ անհրաժեշտ են նաև ըընտիր օրէնքներք և օրինականութեան խիստ պահպանում: Այստեղ Էմինը օրինակ է բերում Անգլիային: Ենշաւելով, նա ասում է որ Անգլիացինները հզօրութեան են հասել նաև նրանով, որ ունեն ընտիր օրէնքներ, որոնց չնորին մարդիկ պաշտպանում են անիրաւութիւններից: Էմինը ներմ պաշտպան է հանդիսանում օրէնքի առաջ մարդկանց հաւասարութեան գաղափարին, լինեն նրանք հարուստ թէ աղքատ:

Էմինը ներմ մասնակից է եղել Մագրասի խմբակի հրամարական «Արագայթ Փառակաց» գրքի օրէնսդրութեան մասի շարադրմանը:

Մեծ է եղած Յովսէփ Էմինի դերը Ժ. Դարի երկրորդ կէսի հայ ազատագրական պայքարի պատմութեան մէջ: Էմինը այդ ժամանակաշրջանի ազատագրական մաքի ու բուրժուական, հակաֆեղալական լուսաւորական շարժման խոշոր գէմքերից մէկն է եղած:

ԱՌՈՒԲԻՆ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Վ Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Բ Վ Ի Ե Ն Ն Ա Ց Ի Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ն Ե Ր Ի Ն

Կոմիտաս Վարդապետ (1869-1935) այս բացիկները ու նամակները գրել է Բեռ-լինից 1897-1899 թթ., իր երածուական ուսումնառութեան շրջանում, հասցեազելով Վիեննայի Միաբարեան Միաբանութեան վանք՝ Հանձնեան Ամսօրեայշին, ՀՀ. Գորբիկ Մէնենի Վիեննայի Միաբարեան մասին: Խնճագրերը, նանելի եւ դիւրընքեռնելի ձեռագրով գրուած, պահւում են վանքի դիւնաբանը: Խորին ընորհակալութիւն ենք յայնում Միաբանութեան Աբբանայր Գեր. Գր. Մանեանին եւ Գիւնապետ Հ. Օգ. Ակնուկեանին՝ Խատարակութեան իրենց սիրայօժար բոլուսութեան համար: Հատարակում ենք առանց ուեւէ փոփխութեան կամ կրնաման. Էջատակի ծանօթութիւնները մերն են: Պահպանել ենք ժամանակագրական կարգը:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Ժընեվի Համալսարան

Հ. — «ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԵԱՅԻ»ին

[14.1.1897, Բերլին]¹

«Հանդիս Ամսօրեայի Տպարանական Խորհրդին.

Խոնարհաբար խնդրում եմ, եթէ կարելի է, պատուական հանդիսիդ 1896 Դեկտեմբեր, ապա շարունակաբար թուականից բոլոր, եւ 1895ից ցարդ, բացի 95 Մարտ, Ապրիլ համարներից առաքել, որոց մէջ Հայոց հին երաժշտութեան մասին յօդուած կայ տպուած:

Բաժանորդագինն եւս գրելու է, կենսադրամս ստանալուս պէս՝ ամէնից ուշ Փետրուարի 15ին միանուագ կվճարեմ:

Խ. Ծ.² Կոմիտաս վարդապետ.

(18)97/14/Ա.3

Բերլին.

Հասցէս.

Archimandrit Komitas.

Berlin. S. W.

Koch Str. 73, bei Strauss.

¹ Բառականը և վայրը նշուած են երկառդի վերջում:

² Խ. Ծ. տառերը հաւանաբար նշանակում են վիսնարի ծառայութեան համար:

Կոմիտաս վարդապետը ուղարարաբ հայերէն գլխադիր տառերով է նշել ամիսները կամ նրանց հերթականութիւնը: - Հանդէսի խմբագրութեան ուղղուած մի համակ տե՛ս ստորև:

Հ. — ՄԱՏԵՆԱՐԴԱՐԱՆԱՊԵՏՑԻՆ

28 Յուլիս [1897]¹. Բերլին.

Բարձրապատի՛ւ Հայր Մատենադարանապետ.

Խոնարհաբար խնդրում եմ, եթէ կարևի է, Մատենադարանիդ մէջ գտնուած Դրիբը Գաղաքահամարի² «Դիրք երաժշտական» և «Նուազարան Երաժշտական» եւ «Դրիբը Կոյիցեալ երգաբան» տպագրուած զրբերը մի ամիս ժամանակով ինծ ուղարկելու հրաման ստանայիթ, որով չափազանց երախտապարտ կմնամ Զեր առաջ:

Մէկ ամիս յետոյ ապահովեալ կվերադարձնեմ Զեզ:

Հասցէս.

Archimandrit Komitas. Berlin S. W. Koch Str. 73. b. Strauss.

Մնամ յարգանօր

ի. Կոմիտաս վարդապետ.

¹ Տարեթիւը եղբակացնում ենք երկուողի սկզբում (հաւանաբար) մատենադարանապետի Դրեսի 29/VII 97' նշումից:

² Գրիբը Գաղաքահամար (1740-1828), բանասենծ, երաժշտ, խաղաքէտ, գպիր: Հանդէս Ամսօրեայի խմբագրութեանն ուղղած նամակում կոմիտաս վարդապետը ազգանուածէ գործածնէ է (Փախանակ այստեղի սի): որ իսկականն է: Նշուած երեք գործերը լոյս են տեսել 1823 թ.: Նրա էլամառուստիւն երաժշտականի դիտութեան աշխատանքը լոյս է տեսել 1873 ին համբեր Մատենադարանի հանդէսի թ. 11 ում, իսկ Գրեյցի որ հոյն նուագարանը՝ 1794 թ.: Նրա մի ուրիշ գործը ձեռագիր վիճակում կորել է Կեսարիայի Ս. Դանիէլ վանքի 85 ձեռագրերի հետ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:

Հ. — Հ. ԳԱՅՐՈՒԵԼ, ՄԷՆԵՎԱՆԾԱՆԻՑ

12/Բ. [1898]¹. Բերլին.

Արժանապատի՛ւ Հ. Գայրիէլ Վ. Մէնէվիշեան²,

Այսօր նամակ ստացայ Գ. Մակար նկմալիսնից³, որ տարակուսելով հարցնում է. «Արդեօք Միսիթարիեան Հ. Միարանութեան համար ուղարկած Պատարազի արարողութիւնն ստացուել է»: Նա ուղարկած է իր ներդաշնակած Պատարազի արարողութիւնից մի օրինակ Բազմազան Միարանութեանդ, բայց տեղեկութիւն լունի: Եթէ ստացուած է, մի երկուողով միամտացնել կիսնդրուի: Եթէ ոչ՝ նոյնպէս: Գիրքն ուղարկած է ալ երաժիշտը մի ուսանողի ծեռքով:

Յարգանաց ողջոյնով՝

ի. Կոմիտաս վարդապետ Գէորգիան:

¹ Տարեթիւը եղբակացնում ենք հասցէատիբոչ, Ընկ[ալայ] 98 14/II, նշումից և, մանաւանդ, բացիկ փառագիր:

² Հ. Գայրիէլ Մէնէվիշեան (1864-1936), Վիեննայի Միսիթարիեան Միարանութեան հանդիպեցեալ նախած, լեզուաբան և բանաէր, բազմաթիւ յօդաւածներ և գրախոսութիւններ է հրատարակել հանդէս Ամսօրեայաւմ:

³ Մակար նկմալիս (1856-1905), համպազիսոր, խմբավար, մանկավարժ: 1895ին թիֆ լիսում նրա մատ երաժշտութեան տեսութիւն է սովորել կոմիտաս Վարդապետը: Հանրայատ է նրա Պատարազը:

⁴ Խ. պիտի կարգացուի իմանարհն կամ իմանարհաբարն:

4.

[15]98. 18.Դ. Բերլին.

Արժանապատիւ Հ. Գաբրիէլ Մէնէվիշեան,

Յարգոյ Բարեկամ,

Վաղուց եմ ստացել Ձեր առաքած յօդուածը. գժրախտաբար, երկրորդ օրն արդէն ինձ բռնեց մի սաստիկ ջերմ, որ երեք օր առաջ միայն բարեհանցաւ իւր այցելութիւնից զերադառնալու. երէկ բաւական առողջ զգալով թարգմանեցի յօդուածիս կէսը¹, որն եւ առաքում եմ նամակիս հետ, գուցէ շարելու պատրաստութիւն տեսնէք, իսկ մացեալ կէսն էլ մի քանի օրից կ'ուղարկեմ յուսով, եթէ առողջութիւնս շարունակէ. օտարութիւնն էլ մի քան չէ, Արժանապատիւ բարեկամ:

Թարգմանութեան վրացերէն եւ ասորերէն կտորների տեղերը բաց թողի, վասն զի ես լցիտեմ այդ լեզուները:

Յարգանօք Ձերդ

Խ. Ծ. Կոմիտաս Վարդապետ Գէորգեան.

¹ Ինչուէ երեսմ է յաշորդ նամակից, Կոմիտաս վարդապետը ուսւերէնից ևայերէն է թարգմանել ևայագէտ նիկողայոս Մասի մի յօդուած Հ. Գաբրիէլ Մէնէվիշեանի խնդրանքով, սակայն Հանդէս Ամսորեայում Մասի յօդուած լոյս չի տեսել Կոմիտաս վարդապետի թարգմանութեամբ, ուրիշների թարգմանութեամբ՝ այս:

5.

98. 18.Դ. Բերլին.

Արժանապատիւ Հայր Գաբրիէլ¹,

Յարգոյ Բարեկամ,

Այսօր վերջացրի թարգմանութիւնը. թղթեակիս հետ միատեղ առաքելու եմ: Նախընթաց նամակումս յայտնելու մոռացել էի, թէ Հ. Գալուստ Տէր Մկրտչեանի² խօսքերը, որ թարգմանաբար առաջ էր թերել Ն. Մառը, աւելի լաւ կինչը նոյն իսկ Արարատից³ արտագրուէր. թէեւ դա էլ թարգմանեցի, որպէս Մառն էր ուսւերէնի փոխադրել:

Պէտք է ասեմ, որ պ. Մառի⁴ լեզուն ո՛չ միայն ծանր, այլ եւ բուն, մաքուր ուսւերէն չէ՝, ուստի շատ մթութիւններ կային. ուստի ինչ ինչ մանր թերութիւններ եթէ պատահեն, ներող կինիք:

Յարգանօք Ձեր բարեկամ

Խ. Ծ. Կոմիտաս Վարդապետ

¹ Հ. Գաբրիէլ Մէնէվիշեան:

² Գալուստ Տէր Մկրտչեան (1860-1918), հռչակաւոր բանակը, նա Հ. Այրը՝ չեր:

³ Արարատ, Եղմիածնի Մայր Արքուն պաշտոնական ամսագրը (1868-1919).

⁴ Նիկողայոս Մառ (1864-1934), արքայագետ, ևայագէտ, լեզուաբան, ևայրը՝ Հայութ, քայլ, ճայրը՝ վրացաւէր:

6.

1898. 6/6. Բերլին.

Արժանապատիւ, Հ. Գարբիէլ Վ. Մէնէվիշեան],
Սիրելի՛ Բարեկամ,

Նոր էի գերադարձել Դրէզնից, ուր Հայ օրիորդ էր վախճանած. Նորա թաղման ծիսակատարութեան համար այնտեղ էի գնացել, երբ ստացայ Զեր Սիրելութեան գիրը՝ ի պատասխան իմ գրութեանս:

Սիրելի՛ Հայր, ես բոյորդի՞ն համամիտ եմ Զեր կարծիքին՝ Հ. Տ. Վ. կտած դասագրին տպագրութեան մասին¹. բայց ցաւելով պէտք է յայտնեմ, որ այդպիսի գանձերու վերայ մարդիկ թուխս են նստում հաւերի պէս, սակայն առանց արդինքի. «Խնբեանք ո՛չ մտանեն եւ որք կամին, չթողունու». այս ցաւալի է, բայց եւ նոյնքան իրականութիւն:

Պ. Մ. Եկմալիսանցին գրուածքը զեռ շատ խոշոր պակասութիւններ ունի, բայց դա ընթերցող հասարակութեան մատչելի կացուցանելու համար կարճ կապեցի՛. Այո՛, ես եւս պատրաստում եմ, բայց զեռ ուշ պէտք է հրապարակ ելնէ, վասն զի շատ խոշոր բան է՝ Շարական, Պատարագ եւ Ժամացիոր, զտած եւ մարրած, եկեղեցական ոնի վերածած, օտարամուտ աննաշակ գեղզեղանքները մկրատած, երածշտական եւ արեւելիսն ոգուն համածային:

Արժ. Հայր, ես բնի Կուտինացի եմ, այստեղ իսկ ծնուած, Սողոմոննեան ընտանից. տասն տարեկան Պ. Տ. Ճեմարանն եկած եւ այնտեղ աւարտելով վարդապետութիւն ստացած. արդէն 18 տարի է Ռուսաստանում կապրիմ, իրրեւ տաճկախօս ստիպուած էի ռուսանայոց բարբառն ուսումնասիրել եւ գործածել, թէեւ ցարդ տաճկահպատակ եմ եւ կմնամ:

Ցանկայ Զեր բաջողջութիւն Զեր բարեկամ Խ. Մ.

Կոմիտաս վարդապետ.

¹ Հաւանարար Պայեան Տ. Վ., «Հայկական երաժշտութեան նորագիւտ Դասագիրք» («Հանդէս Ամսօրեայ», 1895, էջ 62 և 1896, էջ 3:3).

² Թիսուսի մի խօսքն Աւետարանից:

³ Այս գրախօսութիւնը, եթէ հրատարատեսել է, մեզ անյայտ է:

⁴ Գէսրգեան Ճեմարան էջմիածնի վանքում:

7.

[18]98.28.6. Բերլին.

Արժանապատիւ, Հ. Գարբիէլ Վ. Մէնէվիշեան,

Արդո՛յ Բարեկամ,

Նամակիս մէջ ներփակեալ ուղարկում եմ մի փորբիկ գրութիւն առ խմբագրութիւն Հանդէս Ամսօրէի, եթէ արժան եւ կարեւոր դասուի, խնդրեմ, մի փորբիկ անկիւն շնորհեցէ՛ք:

Աշակերտ ժամանակից ի վեր աշխատում էի մեր նախնեաց վեհանուագ դաշնակը վերականգնելուն համար, բայց ծեռքիս տակ կային եւեթ մի բանի այս կամ այն ծեռագրի մէջ սպրդած կցկառուր ու անկապ նիւթեր, որոնք շատ անգամ իրար բոլորովին

¹ Այս գրախօսիւնը լույս էի տեսել հանգէստում, բայց պահպանուել է։ ոպում ենք այս նամակից յետոյ:

հակասական պատկեր էին ներկայացնում. մի ամբողջութիւն կազմակերպող գրութիւն չկար. 1895ի Հանդիսիդ մէջ Տ. Վ. Պ. ի յայտարարութիւնն ուրախացրեց մեզ քատականաչափ, գոնէ նոր յոյս արծարծեց մեր մէջ⁸: Թէեւ, թէ՛ Արժ. Տ. Վ. Պ. թէ՛ Հանդիսիդ խմբագրութիւնը խոստացած էր այս ինդիքի մասին խորհրդածութիւններ, սակայն իմ համբերութիւնս կարճելով, մի նամակ զրեցի Արժ. Տ. Վ. Պ.ին եւ խնդրեցի իմ ծախիւք ծեռապղին ընդօրինակել տալ եւ ինձ ուղարկել. բայց բացասական պատասխան ստացայ. գրում էր, թէ ինըը եպիսկոպոսութիւնն վկայական ունի, եթէ Եպիսկոպոսանաւու Ս. Էջմիածին զայ, այն ժամանակ հիւր ապղին էլ հետո կրերէ. սակայն մենք լաւ էինք սերտել մի տաճկերէն տա ած օկոմէ էշէյլ եազ կէիր, եօնապիթէրաց, ուստի յոյսեմս միանգամայն կտրիցիք: Հանդիսիդ մէջն էլ խորհրդածութիւնը չըբեւացին: Ուստի այս գրութիւնս խմբագրութեանդ ուղղեցի մի քանի տող, գոնէ մասանաւոր գլուխներից մի փունջ կազմելով մաս առ մաս տպել հաճէր Արժ. Հ. Տ. Վ. Պ.-ը, որպէս զի միոց լինի ուսումնասինուու:

Ի՞նչ օգուտ եթէ գանձը թաղուած է մնալու :
Ճանկայով Զեզ բացողաւթիւն

Մնամ Զեր բարեկամ
Կոմիտաս վարդապետ Գէորգեան⁵.

² ՏԵՇ. «Հանրէս» Ամսորեայց, 1895, էջ 62-68, 123-124, Պալեան Տ. Վ., «Հայկական երաժբանութիւն Դասագիրք մը»:

4 Պալեան Տ. Վ. և Հանդէս Ամսօրեայում ոչինչ է հրատապկել նշուած գասագըցից։
5 Զեապէրը պահուեիս է եղել Կեսարիայի Ս. Դանիէլ եկեղեցաւմ, կռապէ։

⁶ Նամակի հասցեատէրը ձախ անկիւնում նշել է՝ թնկացաւ 30/V 98.

8.

[18]98.28.b. *Retroflex.* .

Արգոյ խմբագրութիւն՝

Կեսարացի դպիի Գրիգոր Պապասարքալեանի զրուածներն ամբողջացնելու համար ցանկարար մէց ննը բերում նորա հնագործ աշխատավիրութիւնը, որ նա տպել է տուած 1794 թուին. այս զրիթի մի օրինակն էլ մեր ձեռք ըն անոաւ:

«Գրոյք որ Կոտի նուազարան: Ըստ խնդրոյ յակնա գիտէն գիրացց հանգըլ-
մահտեսի գիլիպպոսի որդի Մահտեսի Սինսա մնձահմբաւ Ամբրային: Ի հովուազե-
տուե. միածնայէջ Արբոյ գահի Տն. Ղուկասու սրճն. Կթողու. ի ամենից Հայոց: Աև ի

1 Եթեմադրութիւնն յարմար էն համարել երատարակել այս կոչքը: Տե՛ս վերևի նամակի ժամանակառութիւնները հայկական երաժշտութեան պատճենները:

վերադիտողութեա. սրց. տնօրինականացն տեղեաց քս.ի, Տեառն Պետրոսի շնորհափայլ Պատրիարքի: ի Կոստանդնուպոլիս: Տպեալ Հրամանաւ իսկ եւ ակնարկութ. նորին սրգն. պատրիարքի՝ Տն. Զաքարիայ ազգասէր կարդացեալ ած. արան բարունապետ: Արտահանեցեալ ի Կեսարացի զապասարալնան Գրիգոր զպէ: Յամի ներմարդութե. Տեառն 1794: ի մերսու ոմխագ: եւ օգոստոսի 23: ի Մայր Տպարան:

Բովանդակութիւն: էջ 3-8 «Ազգարարութիւն ինչ առ բանասէ վերծանօս»: էջ 11-157 երգիր, կը բարձրանալիւր տակ մի տուն շարական: էջ 157 յունարէն երգ: էջ 158-160 «Ճանկ իւրաքանչիւր համարի երգն թէ ո՞րպէս երգի»: ցանկը տաճկերէն երգեր է բովանդակում: էջ 161-254 «Ազգեցութիւնը ինչ երածշատական»: էջ 255-266 հայերէն եւ յունարէն երգեր հայերէն հին խազերով ծայնաղած իրը օրինակ: էջ 287 եկեղեցական խազերի ցանկ: էջ 288-417 զանազան հայերէն եւ յունարէն երգեր: էջ 418-420 յունարէն երգ, յոյն խազերով: էջ 421-428 «Յիշատակարան զրոյս». էջ 428-432 «Ճանկ գրեյս թէ ո՞րպիսի կերպի երգեցնալ լինի. այս նախնթաց ցանկի շարունակութիւնն է նոյնապէ տաճկերէն երգերի անուանական ցանկ:

Առհասարակ շատ հաճելի կլինէր մի այսպիսի էական խնդրին վերաբերեալ ծեռապիր նիւթերը կամաց կամաց երեւան հանել եւ տպագրել:

Յարգանօք՝

Ա. Ծ. Կոմիտաս վարդապետ.

Թ.

[18]98.14/Ձ. Բերլին.

Արժանապատիւ եւ սիրելի՛ Բարեկամ,

Խմբագրութեանէ կողմանէ առաքեալ մատեանը խորին շնորհակալութեամբ բնդունեցայ, որպէս եւ Զեր Հայորութեան թանկագին զրութիւնը: Կամեցայ մի թեթեւակի թղթել, բայց բովանդակութիւնն այնքան զրաւիչ եւ սրտիս մօտիկ էր, որ մինչեւ նիւթոց ցանկը հասայ. այս առթիւ, խնդրում եմ, յայտնեցէ՛ք յարգանքս Սրբ. Հայր Գրիգոր Վ. Դավիչմեհարեանին»:

Աւախութիւնս եւ խնդակցութիւնս օր աւոր աւելանում է տեսնելով Հայ տարրը արեւմտեան զիտութեան աստիճանների բարձունքի վերայ համապայծառ սաւառնելիս:

Սլրելի բարեկամ, ես մի՛շտ պատրաստ եմ, որքան ձեռքիցս կգայ, աջակցելու Զեր Հայորութեան. խնդրեմ, առաքելու կարգազրութիւնն անէք, որ ազատ ժամերիս Զեր թարգմանութեան եւ բնագրի համեմատութիւնն ի գլուխ հանեմ²:

Մի՛շտ պատրաստ Զեր ձառայելու եւ Զեր յարգող

Զերդ Ա. Ծ.

Կոմիտաս վարդապետ Գէորգեան.

¹ Հ. Գրիգորի Գալէմքեարեան (1862-1917), վեճռայի Միւթերեան, քանասէր, էկզուտաբան, մասնագէտ, մամուլի պատմաբան: Կոմիտաս վարդապետի ստացած գիրքը էր:

² Հաւանաբար խօսքը լ. Մասերեանցի Հայերէն բարբառախօսութիւն գրուածքի մասին է, որ Մարգմանել է. Գարբէկ Մէնէվլիշեանը և հրատարակել Հանգէս Ամսօբեայում (1888, ԺԲ, էջ 306-313). Նախ տեղեկութիւն է ուսել էջ 214-215ում. յօդուածը եղել է լ. Մասերեանցի աւարտահամբ. քանի որ բնագիրը սուսերէն է, ուստի Կոմիտաս վարդապետը վերանայել է հայերէն թարգմանութիւնը:

ՆՈՐԻՑ ԵԿԵՂԵՅԱՎԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ԾՐԻԲՁ

Հայ Եկեղեցու առաքելականութեան հարցի շուրջ գրած մեր այս էջերը ուղարկ ենք գիտել Մազաքիս Օրմանեան Պատրիարքի հետեւալ տողերով, որոնք այսօր էլ չեն կորցրի իրենց ոյժմէականութիւնը և արտացոլում են պատմական ճշարտութիւնը. Բնաւական ըլլայ գիտնալ, թէ Հայոց Եկեղեցը ուղղակի առաքելական ծագումը ստոյդ և անհերքելի եղելութիւն մը պէտք է նկատուի Եկեղեցական պատմութեան մէջ, յար և նման ուրիշ առաքելական Եկեղեցիներու ծագումին, եթէ երբեք այն աւանդական և պատմական աղբիւրները՝ որ այս Եղելութիւնը կը հաստատեն, քննադատական

գիտողութեանց կրնան առիթ ընծայել, գիտել կու տանք, որ Հայ Եկեղեցը աւանդութեանց դէմ յարուցուելիք քննադատութիւնները աւելի զօրաւոր չեն քան այն քննադատութիւնները, որոնք յարուցուած են այս Եկեղեցիներուն ծագումին մասին, որոնք ընդհանրապէս իրեւ առաքելական ճանչցուած են⁸⁹,

Կան սրբութիւններ, որոնք ամբողջ ժողովրդին են պատկանում և նման սրբութիւնները չպէտք է մտքի մարզոնքների ենթարկուեն և ջուրը պղտորելուն պատակ հետապնդեն, որովհետեւ այժմ

⁹⁰ Մ. Օրմանեան, Շայոց Եկեղեցին, էջ 21.

10. Հ. ՎԱՐԴԱՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԱՆԻՆ

24/Դ. [1899]։ Բերլին.

Մեծարդոյ Հայր,

Վարդան Մելքիսեդէկան⁹¹,

Ուրախութեամբ ստացայ Զեր պատուական զրութիւնը եւ «Բարբառախօսութիւնը»⁹²: Խնդիր յայտնեցէ՞ թիմ սիրելի բարեկամին՝ Հայր Գ. Մէնէվիշանին իմ խորին շնորհակալութիւնս եւ յարգանօր ողջունեցէ՞ թ նորան: Շատ ուրախացուց այդ փառաւոր նուէրը: Ճանկում եմ նորան բարողութիւն եւ յարդութիւն իւր զործոց համար:

Պատուական Հայր Վարդան, Ձեզ փորդիկ նեղութիւն պէտք է տամ. Աշարական բառն ինչպէս է ստուգաբանած Հայկազեան բառարանից. երկտողիւ յուսամ ստանալ: Նախապէս շնորհակալութիւնս յայտնելով մնամ

Ձեր խ. Ժառայ
Կոմիտաս վարդապետ.

⁹¹ Տարեթիւը Եղելականում ենք հասցէատիրոջ գրեցի ուղաձը՝ Մայիս 10ին 99: Նշումից՝ նախակի սկզբում:

⁹² Հ. Վարդան Մելքիսեդէկան, Վիեննեայի Միթթարեան, ուշի յօդուածներ հՀանդէս Ամսութեայում, 1899 (ԺԹ), էջ 306 և շար., թարգմ. Հ. Գարբեկի Մէնէվիշեան: Կոմիտաս վարդապետը հաւանաբար վերանայել է թարգմանութիւնը (անմաս նախարար նամակի ծանօթութիւնը):

⁹³ Նոր Բանգիք Հայկազեան Լեզուի, Վենետիկ, 1836-1837, երկնաւոր: Տարական ՀՀարգ երրորդ, չիրաք, արաք: Ծիլիւր, գարգէ: միւրու, ամճէ: տարգի, ծրդ, և երշարան, ընդունաբան և կեղեցական երգոց:

